ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
(2014-2015)

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորվել է և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2014 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 12-Ա հրամանով:

Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանով և այլ իրավական ակտերով:

Հանձնաժողովի խնդիրներն են՝ նպաստել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողին ներկայացվող բարոյական բարձր չափանիշների ձևավորմանը, նպաստել ծառայողական կարգապահության ամրապնդմանը, նպաստել կարգապահական խախտումների կանխարգելմանը և այդպիսիք ծնող պատճառների վերացմանը, ապահովել Կոմիտեի ծառայողի անկախությունը և իրավունքների պաշտպանությունը, կանխել Կոմիտեի ծառայողին անհիմն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

Հանձնաժողովը քննարկում է կարգապահական վարույթ հարուցելու մասին միջնորդությունները, տալիս է եզրակացություններ, ընդունում է ընթացակարգային և ըստ էության որոշումներ:

Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի որոշումներ.....00

2. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքից քաղվածք 00

3. «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին⑦ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրաման.....00

4. ««Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով «օրենքի կոպիտ խախտում» հասկացության գնահատման ուղենիշների վերաբերյալ» ՀՀ ՔԿ կարգապահական հանձնաժողովի արձանագրային որոշում....00

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի որոշումներ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

19 հունիսի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Սերոբ Կիրակոսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Գ.Գևորգյանի 30.04.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Սերոբ Կիրակոսյանը վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով քննված թիվ 18102415 քրեական գործով իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀԿԳ քննիչ Ս.Կիրակոսյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Ա. Ավետիսյանի կողմից Ք. Խաչատրյանի կամքին հակառակ, բռնություն գործադրելով վերջինիս հետ սեռական հարաբերություն ունենալու դեպքի առթիվ Շիրակի մարզային քննչական վարչությունում 2015թ. փետրվարի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 18102415 քրեական գործը: Նշված քրեական գործի նախաքննության շրջանակներում ՀԿԳ քննիչ Ս.Կիրակոսյանը քրեական գործի նյութերով նոր քրեական գործ չհարուցելու և այն առանձին վարույթում չառանձնացնելու պայմաններում 2015թ. մարտի 7-ին որոշումներ է կայացրել ՀՀ ՊՆ թիվ 58831 զորամասի ժամկետային զինծառայող Սևակ Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու, նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին: Ավելին՝ քննիչի գործողությունների հետևանքով խախտվել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, որի համաձայն նախաքննությունը տարվում է այն վայրում, որտեղ կատարվել է հանցանքը:

Հիշյալ առերևույթ իրավախախտումների վերաբերյալ Ս.Կիրակոսյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը իրենց վարույթում գտնվող քրեական գործի նյութերով կայացնում են որոշում նոր գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին, իսկ դատարանը նման որոշում կայացնելու միջնորդությամբ դիմում է դատախազին, եթե մեղադրյալին վերագրվող հանցագործություններից բացի բացահայտված է առաջինի հետ չկապված այլ հանցագործություն, որը կատարել է այլ անձ՝ առանց մեղադրյալի մասնակցության»: Տվյալ պարագայում՝ իր վարույթում քննվող թիվ 18102415 քրեական գործով միակ մեղադրյալը հանդիսացել է ՀՀ ՊՆ 58831 զորամասի ժամկետային զինծառայող Սևակ Խաչատրյանը, իսկ Ա.Ավետիսյանն ունեցել է անչափահաս վկայի կարգավիճակ: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը խախտելուն, Ս.Կիրակոսյանը հայտնեց, որ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն նախաքննության արագության և լրիվության նպատակով նախաքննությունը կարող է կատարվել հանցագործության բացման վայրում, ինչպես նաև կասկածյալի, մեղադրյալի կամ վկաների մեծամասնության գտնվելու վայրում, իսկ տվյալ քրեական գործով տուժողը, տուժողի օրինական ներկայացուցիչը, տուժողի ընտանիքի անդամները, դասընկերը, ծանոթները, Արտուշ Ավետիսյանը և նրա ընկերները, ինչպես նաև Ք. Խաչատրյանի ուսուցիչները մշտապես բնակվել են Գյումրի քաղաքում և ելնելով բռնաբարության գործերով քննության մարտավարությունից նպատակահարմար է եղել քրեական գործով նախաքննությունն իրականացնել Գյումրի քաղաքում:

ՈՒսումնասիրելով նյութերը կարգապահական հանձնաժողովը գտավ, որ քննիչի կողմից իր լիազորություններն իրականացնելիս նոր հանցագործության հատկանիշներ հայտնաբերելիս, առանձին քրեական գործ չհարուցելու և նման պայմաններում անձին որպես մեղադրյալ ներգրավելու, նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու դրվագով Ս.Կիրակոսյանի արարքներում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը, այսինքն՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի, 176-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործի նյութերով նոր քրեական գործ չհարուցելու և նման պայմաններում ժամկետային զինծառայող Ս.Խաչատրյանին որպես մեղադրյալ ներգրավելու, նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու դրվագով Ս. Կիրակոսյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 1):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

քաղ. Երևան 26 հունիսի 2015թ.

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արարատի քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի քննիչ Արկադի Օսիպյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

2015թ. հունիսի 9-ին ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Թամազյանը Արարատի մարզի քննչական վարչության պետ Ա. Հարությունյանի զեկուցագրի հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի նախագահին գրությամբ հայտնել է, որ Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի քննիչ Արկադի Օսիպյանը վարույթում քննվող N44105015 և N44121414 քրեական գործերով թույլ է տվել դատավարական խախտումներ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա. Օսիպյանին վերագրվող առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների:

1. **Քննչական բաժնի պետի գրավոր պահանջով քննիչ Արկադի Օսիպյանը չի ներկայացրել վարույթում քննվող N 44105015 և N 44123014 քրեական գործերը:**

Քննիչ Արկադի Օսիպյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ վարույթում քննվող N 44105015 և N 44123014 քրեական գործերը չի ներկայացրել քննչական բաժնի պետին, քանի որ չի վստահել նրան:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ թվարկված քրեական գործերն առանց իրավաչափ նպատակի քննչական բաժնի պետին չհանձնելով քննիչ Արկադի Օսիպյանը զրկել է վերջինիս օրենքով սահմանված կարգով իրականացնելու իր լիազորությունները: Հիշյալ անգործությամբ Ա. Օսիպյանը քննչական բաժնի պետին զրկել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածով նախատեսված լիազորությունների իրականացնելու հնարավորությունից:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Արկադի Օսիպյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. **Քննիչ Արկադի Օսիպյանը խարդախության փորձի և գույքային վնաս հասցնելու դեպքերով հարուցված քրեական գործերով արդեն իսկ հայտնի հանցագործությամբ տուժած անձանց քրեական գործ հարուցելու որոշման հետ միաժամանակ տուժող չի ճանաչել:**

Քննիչ Արկադի Օսիպյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ քրեական գործ հարուցելու պահին հստակ չի եղել այն անձը, ում պետք էր տուժող ճանաչել:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ դրվագով քննիչ Արկադի Օսիպյանն անձանց տուժող է ճանաչել համապատասխանաբար երկու և երեք օր անց: Քրեական գործեր հարուցելու պահին տուժող ճանաչելու փաստական հիմքերի առկայությունն ակնհայտ չի եղել:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Արկադի Օսիպյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

3. N44108715 քրեական գործով քննիչ Արկադի Օսիպյանն առանց հիմնավոր պատճառի տուժողին հարցաքննել է 11 օր անց: Բացի այդ, նշված օրերի ընթացքում ոստիկանությանը հանձնարարություն ուղարկելուց բացի նա որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չի կատարել:

Քննիչ Արկադի Օսիպյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ տուժողը գտնվել է սարերում և առաջին իսկ հնարավորության պայմաններում հարցաքննել է նրան:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ դրվագով քննիչ Արկադի Օսիպյանը տուժողին հարցաքննել է առաջին իսկ հնարավորության ժամանակ: Բացի այդ, տուժողին 11 օր անց հարցաքննելը չի ազդել ապացույցների կորստի վրա: Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Արկադի Օսիպյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քննչական բաժնի պետի գրավոր պահանջի համաձայն քրեական գործերը չտրամադրելու դրվագով քննիչ Արկադի Օսիպյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):

2. Քրեական գործերով հանցագործությունից տուժած անձանց քրեական գործ հարուցելու որոշման հետ միաժամանակ տուժող չճանաչելու դրվագով քննիչ Արկադի Օսիպյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (5 կողմ, 1 դեմ):

3. N44108715 քրեական գործով տուժողին 11 օր անց հարցաքննելու դրվագով քննիչ Արկադի Օսիպյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (6 կողմ, 0 դեմ):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

26 հունիսի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Էդգար Ավդալյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին ան-վտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանի 08.05.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ հիմնավորվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Էդգար Ավդալյանը վարույթում քննված թիվ 13817814 քրեական գործով իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Է.Ավդալյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Ա.Չիլինգարյանի առողջությանը դիտավորությամբ միջին ծանրության վնաս պատճառելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում քննչական գործողություններ /առերեսումներ/ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում, քննիչը գործով անցնող անձանց ցուցմունքներում առկա էական հակասությունների վերաբերյալ ժամանակին առերեսումներ չի կատարել, դրանք իրականացրել է ուշացումով՝ շուրջ 2.5 ամիս անց, որպիսի պայմաններում այլևս հնարավոր չի եղել հիմնավորել մի խումբ անձանց կողմից Ա.Չիլինգարյանի առողջությանը դիտավորությամբ միջին ծանրության վնաս պատճառելու հանգամանքը և քրեական գործով վարույթը կարճվել է:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Է.Ավդալյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ նախաքննության ընթացքում ծանուցագիր է ուղարկել Ա.Չիլինգարյանին, սակայն ծանուցագիրը ետ է վերադարձվել հասցեի ոչ ճիշտ լինելու պատճառով, որպիսի պայմաններում այլևս նրան բերման ենթարկելու որոշում չի կայացրել: Այդ ընթացքում հեռախոսակապի մեջ է գտնվել Ա.Չիլինգարյանի հետ, վերջինս իրեն հավաստիացրել է, որ կներկայանա քննչական բաժին, սակայն քննության ներկայացել է միայն 05.02.2015թ. և նույն օրն էլ կատարել է առերես հարցաքննությունները:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննչական գործողություններ /առերեսումներ/ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում, քննիչը գործով անցնող անձանց ցուցմունքներում առկա էական հակասությունների վերաբերյալ ժամանակին առերեսումներ չի կատարել, դրանք իրականացրել է ուշացումով՝ շուրջ 2.5 ամիս անց, ինչը կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Ա.Ավդալյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը՝ այսինքն՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 216-րդ հոդվածի պահանջները:

2.Ա.Չիլինգարյանը 03.12.2015թ. պատշաճ ծանուցվել է 06.12.2015թ. որպես մեղադրյալ հարցաքննության նպատակով ներկայանալու քննչական բաժին, սակայն չի ներկայացել և նման պայմաններում քննիչը որոշում չի կայացրել վերջինիս բերման ենթարկելու մասին:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Է.Ավդալյանը Կարգապահական հանձնաժողովին որևէ հստակ պարզաբանում չներկայացրեց, հայտնելով, որ անցել է 6 ամսից ավելի ժամանակ և լավ չի հիշում իրադարձությունները:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Ա.Չիլինգարյանը դեռևս 03.12.2014թ. պատշաճ ծանուցվել է 06.12.2014թ. որպես մեղադրյալ հարցաքննության ներկայանալու նպատակով, սակայն չի ներկայացել, ավելին ներկայացել է միայն շուրջ 2 ամիս անց և նման պայմաններում ավագ քննիչ Է.Ավդալյանը որոշում չի կայացրել Ա.Չիլինգարյանին բերման ենթարկելու մասին: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Առերեսումներ կատարելու ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում, ժամանակին մեղադրյալներ՝ Ա.Չիլինգարյանի և Կ.Հարությունյանի, վկա Վ.Զաքևոսյանի և մեղադրյալ Ա.Չիլինգարյանի, վկա Ս.Մկրտչյանի

և մեղադրյալ Ա.Չիլինգարյանի միջև առերեսումներ չկատարելու դրվագով Է.Ավդալյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2.Ա.Չիլինգարյանին պատշաճ ծանուցված լինելու պայմաններում բերման չենթարկելու և քննչական գործողություններին մասնակից չդարձնելու դրվագով Է.Ավդալյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին

26 հունիսի 2014 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, քննարկելով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, արդարադատության լեյտենանտ Սուրեն Դումանյանի նկատմամբ «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի միջնորդությունը, նկատի ունենալով, որ Ս.Դումանյանը վարույթում քննված մի շարք քրեական գործերի նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ կատարել է անհարկի ձգձգումներով կամ ընդհանրապես չի կատարել, անտեսել է դատախազի դրանց իրագործման վերաբերյալ ցուցումի պահանջները, ծառայողական պարտականությունները կատարել է ոչ պատշաճ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի, 216-րդ հոդվածի պահանջները, ինչն ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելու, որ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 19.06.2015թ. որոշմամբ հիմնավորվել է բազմաթիվ կարգապահական խախտումների փաստի առկայությունն ու քննիչ Ս.Դումանյանի մեղավորությունը, հաշվի առնելով, որ քրեադատավարական օրենքի նմանատիպ կոպիտ խախտումներ թույլ տալու համար վերջինս 26.12.2014թ. արդեն իսկ ենթարկվել է «զգուշացում» կարգապահական տույժի, սակայն անհրաժեշտ հետևություններ չի արել, ուստի ղեկավարվելով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2014թ. նոյեմբերի 17-ի թիվ 12-Ա հրամանով սահմանված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 77-րդ և 30-րդ կետերով՝

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ր Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, արդարադատության լեյտենանտ Սուրեն Դումանյանի նկատմամբ «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժի կիրառումը տվյալ իրավիճակում համարել նպատակահարմար (կողմ՝ 6, դեմ՝0).

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

24 հուլիսի 2015թ քաղ. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Վայոց Ձորի մարզային քննչական վարչության քննիչ Արթուր Հարությունյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

2015թ. հուլիսի 1-ին ՀՀ ՔԿ Վայոց Ձորի մարզային քննչական վարչության պետ Վ. Ավագյանը ՀՀ ՔԿ նախագահին զեկուցագրով հայտնել է, որ նույն վարչությունն քննիչ Ա.Հարությունյանն անհայտ հանգամանքներում կորցրել է իր ծառայողական վկայականը:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց որ կորցնելով ծառայողական վկայականը, քննիչ Ա.Հարությունյանը խախտել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 08.09.2014թ. N 4-Ա հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողի անձնական կնիքների, ծառայողական վկայականի նկարագրերի և դրանք հատկացնելու կարգի 4-րդ կետի պահանջները:

Հանձնաժողովը որոշեց, որ ծառայողական վկայականը կորցնելով քննիչ Ա Հարությանը գործողություններում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչակեսն կո

միտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73 75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ծառայողական վկայականը կորցնելու համար քննիչ Արթուր Հարությունյանի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 2 դեմ).
2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուիղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

ՈՐՈՇՈՒՄ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

24 հուլիսի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գոռ Սաղոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազ Վ.Պետրոսյանի 01.06.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ նույն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գոռ Սաղոյանը, վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցված թիվ 16141314 քրեական գործի նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Գ.Սաղոյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագների.

1. **ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով /շորթում/ հարուցված թիվ 16141314 քրեական գործի նախաքննության ընթացքում վկա Ռ.Խաչատրյանի միջնորդությունը՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին չի քննարկել և օրենքով սահմանված ժամկետներում նրան չի պատասխանել՝ անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի դրույթը:**

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Գ.Սաղոյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ այն ուշադրության հետևանքով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի պահանջները՝ 5 օրյա ժամկետում չի քննարկել վկա Ռ. Խաչատրյանի միջնորդությունը և օրենքով սահմանված կարգով նրան չի պատասխանել: Ընդունում է իրեն առերևույթ վերագրվող իրավախախտումը:

ՈԻսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, նախաքննության ընթացքում ավագ քննիչ Գ.Սաղոյանը քրեական գործով վարույթը կարճելու մասին վկա Ռ.Խաչատրյանի միջնորդությունը՝ օրենքով սահմանված ժամկետներում չի քննարկել և նրան չի պատասխանել՝ անտեսելովքրեական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածով

2. **Տևական ժամանակով՝ շուրջ 36 օր քրեական գործով որևէ քննչական գործողություն չի կատարել՝ ինչի արդյունքում գործի համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ մնացել են չբացահայտված՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:**

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Գ.Սաղոյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ծանրաբեռնված լինելով վարույթում քննվող այլ քրեական գործերի նախաքննությամբ ի վիճակի չի եղել հիշյալ քրեական գործով կատարել պատշաճ նախաքննություն:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հստակեցված չէ քննիչին առերևույթ վերագրվող իրավախախտման հատկանիշները, պարզ չէ թե նշված ժամանակատավածում ինչ հրատապ քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտություն է եղել, որը չի կատարվել, իսկ քննիչի անգործությունը տվյալ դեպքում ապացույցների կորստի չի հանգեցրել, որի պայմաններում ավագ քննիչ Գ.Սաղոյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչակւսն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վկայի միջնորդությունը օրենքով սահմանված ժամկետներում չքննարկելու և նրան չպատասխանելու դրվագով ավագ քննիչ Գ.Սաղոյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝ 0):
2. Տևական ժամանակով՝ շուրջ 36 օր քրեական գործով որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չկատարելու դրվագով ավագ քննիչ Գ.Սաղոյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0):
3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

14 օգոստոսի 2015թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Սահակյանի և նույն բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Ա.Մարգարյանի 07.07.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ հիմնավորվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Մուշեղ Սահակյանը վարույթում քննված թիվ 11839114 քրեական գործով իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Մ.Սահակյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1.Ավագ քննիչ Մ.Սահակյանը հսկող դատախազի 18.12.2014 և 05.02.2015թթ. առարկայական ցուցումների պահանջները կատարել է մասնակի՝ քրեական գործով անցնող անձանց ցուցմունքներում առկա էական հակասությունների վերաբերյալ առերես հարցաքննություններ չի կատարել, չի զննել տուժող՝ Ս.Շահինյանի, նրան հիվանդանոց տեղափոխած անձի՝ վկա Ս.Բաղդասարյանի հեռախոսազանգերի վերծանումները, չի կատարել դրանից բխող քննչական կամ այլ դատավարական գործողություններ՝ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Մ.Սահակյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ նախաքննության ընթացքում պլանավորել է կատարել հիշյալ գործողությունները, սակայն արձակուրդ գնալու կապակցությամբ չի հասցրել:

ՈՒսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Մ.Սահակյանը սահմանված կարգով չի բողոքարկել և չի կատարել հսկող դատախազի օրինական ցուցումի պահանջները՝ անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Բացի այդ, քննչական գործողություններ /առերեսումներ/ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում, քննիչը գործով անցնող անձանց ցուցմունքներում առկա էական հակասությունների վերաբերյալ ընդհանրապես առերեսումներ չի կատարել, ինչը կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Մ.Սահակյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը՝ այսինքն՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

2.Ավագ քննիչ Մ.Սահակյանը քրեական գործն ուսումնասիրության նպատակով վարչական շրջանի դատախազություն ուղարկելու վերաբերյալ գրավոր պահանջների առկայության պայմաններում այն դատախազություն է ուղարկել շուրջ 65 օր անց, ընդ որում 25.05.2015թ. մինչև 24.06.2015թ. որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություններ չի կատարել, իսկ 2015թ. մարտի 27-ից մինչև 2015թ. հունիսի 25-ը՝ ընդամենը մակերեսորեն զննել է ստացված վերծանումներից մի քանիսը և հարցաքննել փորձագետ Ռ.Վարդանյանին՝ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Մ.Սահակյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ նպատակահարմար չի գտել քրեական գործը դատախազություն ուղարկելու, դրա անհրաժեշտությունը չի տեսել, այդ ընթացքում հսկող դատախազի հետ բանավոր քննարկել է քրեական գործը: Իսկ քրեական գործով տևական ժամանակով որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չկատարելու վերաբերյալ Մ.Սահակյանը հայտնեց, որ այդ ընթացքում զբաղված է եղել վարույթում քննվող այլ քրեական գործերի նախաքննությամբ:

ՈՒսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ 29.04.2015թ և 26.05.2015թ. Շենգավիթ վարչական շրջանի դատախազությունից գրություններ են ստացվել քննչական բաժին՝ քրեական գործն ուսումնասիրության նպատակով դատախազություն ուղարկելու պահանջով, որոնք նույն օրը մակագրվել են քննիչին, ընդ որում քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանը գրավոր ցուցում է տվել Մ.Սահակյանին՝ քրեական գործը դատախազություն ուղարկելու վերաբերյալ և նման պայմաններում քրեական գործը դատախազություն է ուղարկվել միայն 65 օր անց, արդյունքում՝ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը լիարժեք հնարավորություն չի ունեցել իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր լիազորությունները և խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջները: Բացի այդ, հիշյալ դրվագով ավագ քննիչ Մ.Սահակյանն առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով՝ շուրջ 1 ամիս դրսևորել է անգործություն՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Մ.Սահակյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

3.Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանն իր հերթին չի հետևել անմիջական ենթակայության տակ գտնվող քննիչի կողմից հիշյալ քրեական գործով քննչական գործողություններն ու դատախազի ցուցումները ժամանակին կատարելուն, չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դրույթները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Կ.Շառոյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ իր անմիջական ենթակայության ներքո աշխատում են 10 քննիչներ և անում է հնարավորինս որպեսզի քրեական գործերով քննչական գործողություններն ու դատախազի ցուցումները ժամանակին կատարվեն:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանը առաջին կիսամյակի ընթացքում իր ծառայողական պարտականությունները կատարել է բարեխղճորեն, ենթակա քննիչները աշխատել են ծանրաբեռնված, մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկած քրեական գործերի քանակով Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժինը առաջիններից մեկն է ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումների թվում: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հսկող դատախազի ցուցումի կատարման նկատմամբ պատշաճ հսկողություն չիրականացնելու դրվագով քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը:

4. Կ.Շառոյանը 29.04.2015թ. անձամբ գրավոր ցուցում է տվել քննիչին՝ քրեական գործը վարչական շրջանի դատախազություն ուղարկելու մասին, սակայն հետամուտ չի եղել դրա կատարմանը, արդյունքում քրեական գործը դատախազություն է ուղարկվել շուրջ 65 օր անց:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Կ.Շառոյանը Կարգապահական հանձնաժողովին հստակ պարզաբանումներ չներկայացրեց:

ՈՒսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նման ընթացակարգ չի նախատեսում և հիշյալ դրվագով քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հսկող դատախազի 18.12.2014 և 05.02.2015թթ. ցուցումները սահմանված կարգով չբողոքարկելու և դրանք մասնակի կատարելու դրվագով Մ.Սահակյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. Քրեական գործը ուսումնասիրության նպատակով առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով դատախազություն չուղարկելու, 25.05.2015թ. մինչև 24.06.2015թ. անգործություն դրսևորելու դրվագով Մ.Սահակյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

3. Հսկող դատախազի ցուցումի կատարման նկատմամբ պատշաճ հսկողություն չիրականացնելու դրվագով քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 3, դեմ՝ 3):

4. Քրեական գործը վարչական շրջանի դատախազություն ուղարկելուն հետամուտ չլինելու դրվագով քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

5. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտմանմեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

14 օգոստոսի 2015թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ինններորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ալիկ Հայրապետյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ Հ.Գրիգորյանի 02.07.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ զինվորական քննչական գլխավոր վարչության ինններորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ալիկ Հայրապետյանի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով քննված թիվ 90552315 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Հայրապետյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1.Իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում Գ.Ներսիսյանին մեղադրյալի դատավարական կարգավիճակ չի տվել, այսինքն խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Հայրապետյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ հսկող դատախազի հետ քննարկել է Գ.Ներսիսյանի կարգավիճակ տալու հարցը և վերջինս բանավոր ցուցում է տվել հարցաքննել խնջույքի մասնակից բոլոր անձանց, որից հետո նոր միայն անդրադառնալ Գ.Ներսիսյանի կարգավիճակի հարցին: Ա.Հայրապետյանը հայտնեց նաև, որ 29.07.2015թ. որպես կասկածյալ հարցաքննել է Գ.Ներսիսյանին և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառել չհեռանալու մասին ստորագրությունը: Վերջինս ավելացրեց նաև, որ նշված դրվագով ընդունում է իրեն առերևույթ վերագրվող խախտումը:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Գ.Ներսիսյանին օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության դեպքում քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չի տվել:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Ա.Հայրապետյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը՝ այսինքն՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի պահանջները:

2.Նախաքննության ընթացքում վիճաբանության մասնակիցների և հնարավոր ականատեսների հեռախոսազանգերի վերծանումները ստանալու համար միջնորդությամբ դատարան չի դիմել, դրանից բխող քննչական կամ այլ դատավարական գործողություններ չի կատարել, ինչի հետևանքով հնարավոր կլիներ պարզել մի շարք վկաների ցուցմունքների իսկությունն ու արժանահավատությունը, արդյունքում խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Հայրապետյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ըստ նախաքննությամբ ձեռք բերված տվյալների խնջույքի մասնակիցների գերակշիռ մասը հեռացել էր մինչև միջադեպը, այդ պատճառով նպատակահարմար չի գտել դիմելու դատարան և ստանալու նրանց հեռախոսահամարներից կայացած զանգերի վերծանումները, դրանք քրեական գործի համար ապացուցողական նշանակություն չեն ունեցել:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ վիճաբանության մասնակիցների և հնարավոր ականատեսների հեռախոսազանգերի վերծանումները ստանալու դեպքում հնարավոր կլիներ պարզել մի շարք վկաների ցուցմունքների իսկությունն ու արժանահավատությունն, ինչը տվյալ դեպքում իրենից հրատապություն է ներկայացրել և քննիչի կողմից չի կատարվել: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Ա.Հայրապետյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

3. Հանցագործությունից տուժած Կ.Մարտիրոսյանին օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում քրեական դատավարության մասնակցի՝ տուժողի կարգավիճակ է տվել գործը վարույթ ընդունելուց 41 օր անց, որի արդյունքում վերջինս լիարժեք հնարավորություն չի ունեցել օգտվելու իր դատավարական իրավունքներից՝ անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ և 59-րդ հոդվածների պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Հայրապետյանը Կարգապահական հանձնաժողովին հստակ բացատրություն չտվեց, նշելով, որ քրեական գործը հարուցվել է խուլիգանության դեպքի առթիվ, կատարել է նախաքննություն և պարզելով, որ Կ.Մարտիրոսյանին հանցագործությամբ անմիջականորեն պատճառվել է ֆիզիկական վնաս, կայացրել է համապատասխան որոշում:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Կ.Մարտիրոսյանին օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չի տվել, ինչը մարդու իրավունքներին առնչվող դատավարական նորմերի խախտում է: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Ա.Հայրապետյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ և 59-րդ հոդվածների պահանջները:

4.Նախաքննության ընթացքում չեն պարզվել և չեն հարցաքննվել դեպքի հնարավոր ականատես՝ վկա Ա. Տիգրանյանի երևանաբնակ հյուրերը, որոնցից մեկի՝ ոմն Սուրենի հետ Ա.Տիգրանյանն իր ավտոմեքենայով տուժողներից՝ Բ.Բեգլարյանին տեղափոխել է հիվանդանոց:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Հայրապետյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ նախաքննության ընթացքում պլանավորել է հարցաքննել Ա.Տիգրանյանի հյուրերին, սակայն անձնական խնդիրների պատճառով այդ ուղղությամբ ոչինչ չի հասցրել ձեռնարկել:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Ա.Տիգրանյանի երևանաբնակ հյուրերի ինքնությունը ճշտելու և քննությանը ներկայացնելու ուղղությամբ Ա.Հայրապետյանն առարկայական ոչինչ չի ձեռնարկել, ինչն իրենից որոշակի հրատապություն է ներկայացրել և դրանք կատարելու արդյունքում հնարավոր կլիներ իրավական ճիշտ գնահատական տալ հանցագործություն կատարած անձի և այլ անձանց արարքներին: Բացի այդ, Ա.Տիգրանյանի հարցաքննության ընթացքում վերջինիս հետ տաղավարում գտնվող անձանց վերաբերյալ համապատասխան հարցադրումներ չի կատարել և նշված գործողությունները ժամանակին չկատարելը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Ա.Հայրապետյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում Գ.Ներսիսյանին մեղադրյալի դատավարական կարգավիճակ չտալու դրվագով Ա.Հայրապետյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2.Նախաքննության ընթացքում վիճաբանության մասնակիցների և հնարավոր ականատեսների հեռախոսազանգերի վերծանումները ստանալու համար միջնորդությամբ դատարան չդիմելու և դրանից բխող քննչական կամ այլ դատավարական գործողություններ չկատարելու դրվագով Ա.Հայրապետյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

3.Հանցագործությունից տուժած Կ.Մարտիրոսյանին օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում քրեական դատավարության մասնակցի՝ տուժողի կարգավիճակ չտալու դրվագով Ա.Հայրապետյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

4. Նախաքննության ընթացքում վկա Ա.Տիգրանյանի ընկերների ինքնությունը պարզելու և հարցաքննելու ուղղությամբ առարկայական ոչինչ չձեռնարկելու, Ա.Տիգրանյանի հարցաքննության ընթացքում վերջիններիս վերաբերյալ համապատասխան հարցադրումներ չկատարելու դրվագով Ա.Հայրապետյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

5. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

14 օգոստոսի 2015թ քաղ. Երևան.

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուրարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գևորգ Ադամյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ս Ր Զ Ե Ց

2015թ. հուլիսի 22-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետ Զ. Ֆարխոյանը գրությամբ ՀՀ քննչական կոմիտեի նախագահին է ուղարկել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ Ռ. Երիցյանի միջնորդությունը՝ նույն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ. Ադամյանի և բաժնի պետ Ս. Մաթևոսյանի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Գ. Ադամյանին վերագրվող առերևույթ հետևյալ խախտումը:

Քննիչ Գ. Ադամյանը որպես վկա չի հարցաքննել Սևակ Պողոսյանին, ում տուժողը զանգահարել է անազատության մեջ գտնվելու ընթացքում:

Քննիչ Գևորգ Ադամյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ «ԱրմենՏել» ՓԲ ընկերությունից ստացած վերծանումներում առկա է եղել Սևակ Պողոսյանի հեռախոսահամարը, ում գրասենյակում զտվելու ընթացքում զանգահարել է տուժող Վ.Հարությունյանը: Նրան հարցաքննության հրավիրելու համար բջջային օպերատորի ներկայացրած տվյալներով և համակարգչից ստացված հասցեով ծանուցագիր է ուղարկել, սակայն այն հասցեատիրոջը չի հասել, իսկ

առաքիչը ծրարի վրա նշել է, որ անունը սխալ է: Հետագայում, նույն անձի տվյալներով որոշում է կայացրել անձին բերման ենթարկելու մասին;

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը սահմանված կարգով չի պարզել 094-82-98-59 հեռախոսահամարի բաժանորդի տվյալներն ու անհայտ անձի տվյալներով հարցաքննության հրավիրելու ծանուցագիր, ապա՝ անձին բերման ենթարկելու մասին որոշում է կայացրել:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Գևորգ Ադամյանի գործողություններում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործով սահմանված կարգով չպարզված բաժանորդի տվյալներով անձին բերման ենթարկելու մասին որոշում կայացնելու դրվագով ավագ քննիչ Գևորգ Ադամյանի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):
2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

14 օգոստոսի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Չարենցավանի քննչական բաժնի քննիչ Ռաֆայել Սարգսյանի և Աբովյանի քննչական բաժնի քննիչ Սուրեն Կարապետյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, քննիչներ Ռ.Սարգսյանին և Ս.Կարապետյանին, ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ա.Ավետիսյանին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնում քննվող թիվ 20115615 քրեական գործով ձերբակալված Գևորգ Մկրտումյանի կողմից հիշյալ քննչական բաժնի վարչական շենքից փախուստի դիմելու առթիվ ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության արդյունքներով եզրակացություն է կազմվել այն մասին, որ վերոհիշյալ քրեական գործի նախաքննության ընթացքում կասկածյալ Գ.Մկրտումյանին ձերբակալելուց հետո, ինչպես նաև նրա հետ քննչական գործողություններ կատարելու ընթացքում, վարույթն իրականացնող մարմինը՝ քննչական խմբի ղեկավար՝ Չարենցավանի քննչական բաժնի քննիչ Ռ.Սարգսյանը և քննչական խմբի անդամ՝ Աբովյանի քննչական բաժնի քննիչ Ս.Կարապետյանը, պատշաճ չեն կատարել իրենց ծառայողական պարտականությունները՝ ՀՀ կառավարության 02.04.2009թ. թիվ 351-Ն որոշմամբ հաստատված՝ ձերբակալված և կալանավորված անձանց ՀՀ ոստիկանության կողմից ուղեկցման և պահպանման կարգի պահանջների խախտմամբ չեն հանձնարարել ՀՀ ոստիկանության ուղեկցող կամ տարածքային ստորաբաժանման ծառայողներին ապահովել ձերբակալված անձի պահպանությունն ու ուղեկցումը, ինչի արդյունքում Գ.Մկրտումյանին հաջողվել է քննչական բաժնի վարչական շենքից դիմել փախուստի:

Կարգապահական հանձնաժողովը գտավ, որ տվյալ իրավիճակում հիշատակված՝ կարգը կիրառելի չէ, սակայն միաժամանակ քննարկեց, թե արդյոք քննիչներ Ռ.Սարգսյանն ու Ս.Կարապետյանը չեն խախտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի և 133-րդ հոդվածի պահանջները, ինչի արդյունքում հանձնաժողովը որոշեց, որ իրավական կարգավորման անորոշության պայմաններում բացակայում է քննիչներ Ռ.Սարգսյանի և Ս.Կարապետյանի կողմից՝ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված, օրենքի կոպիտ խախտման կամ ծառայողական պարտականությունները չկատարելու փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Չարենցավանի քննչական բաժնի քննիչ Ռ.Սարգսյանի և Աբովյանի քննչական բաժնի քննիչ Ս.Կարապետյանի արարքում բացակայում են քրեադատավարական օրենքի կոպիտ խախտման կամ ծառայողական պարտականությունները չկատարելու փաստերը (կողմ՝ 4, դեմ՝ 2):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

18 սեպտեմբերի 2015թ. քաղ. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Գիորգի Ագաջանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

2015թ. օգոստոսի 27-ին ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության պետ Մ. Վարդանյանը գրությամբ հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Գիորգի Ագաջանյանը 1.08 մգ/լ ալկոհոլային հարբածության վիճակում, խախտել է ճանապարհային երթևեկության կանոնները, առաջացրել է շղթայական վթար, ինչի արդյունքում երկու անձինք ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Գ.Ագաջանյանին վերագրվող հետևյալ առերևույթ խախտումները.

1. **2015թ. օգոստոսի 16-ին՝ ժամը 22^{30}-ի սահմաններում, ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Գիորգի Ագաջանյանը ոգելից խմիչք օգտագործած՝ 1.08 մգ/լ ալկոհոլային հարբածության վիճակում, Աբովյանի ՃՈ հենակետի մոտ իր վարած «ԲՄՎ-325» մակնիշի 35UL032 հ/հ ավտոմեքենայով խախտել է ճանապարհային երթևեկության կանոնները և հարվածել առջևից ընթացող ավտոմեքենային, ինչի հետևանքով՝ տեղի ունեցած շղթայական վթարի արդյունքում չորս ավտոմեքենաներ վթարվել են, իսկ երկուսի վարորդները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:**

Քննիչ Գիորգի Աղաջանյանսն ընդունել է կատարածը:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Գ.Ագաջանյանը կոպիտ կերպով խախտել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված՝ հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնների ամենօրյա վարքագիծը, այն է՝ չի հարգել օրենքը, վերը նշված գործողություններով իր պաշտոնին վայել վարքագիծ չի դրսևորել, խաթարել է քննիչի պաշտոնի և քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ հասարակության ունեցած վստահությունն ու բարի համբավի ձևավորումը: Նշված գործողություններով քննիչ Գ.Ագաջանյանը կոպիտ կերպով խախտել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Գիորգի Ագաջանյանի գործողություններում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նշված գործողություններով քննիչ Գիորգի Ագաջանյանը կոպիտ կերպով խախտել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները և արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (6 կողմ, 1 դեմ):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին

18 սեպտեմբերի 2015թ. քաղ. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, քննարկելով ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Գիորգի Ագաջանյանի նկատմամբ «լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի միջ-նորդությունը, հաշվի առնելով, որ քննիչ Գ. Ագաջանյանն իր գործողություններով կոպիտ կերպով խախտել է հանրային ծառայողի էթիկայի կանոնները, չի հարգել օրենքը, իր պաշտոնին վայել վարքագիծ չի դրսևորել, խաթարել Է քննիչի և քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ հասարակության ունեցած վստահությունն ու բարի համբավի ձևավորումը, ղեկավարվելով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով. ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2014թ. նոյեմբերի 17-ի թիվ 12-Ա հրամանով սահմանված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 77-րդ և 81-րդ կետերով՝

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ր Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, քննարկելով ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Գիորգի Ագաջանյանի նկատմամբ «լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժ կիրառելու միջնորդությունը՝ այն համարել նպատակահարմար (6 կողմ, 1 դեմ):
2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

18 սեպտեմբերի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Վլադիմիր Ասատրյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Թամազյանի 11.08.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Վ.Ասատրյանը, վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետի հատկանիշներով հարուցված 50300915 քրեական գործի նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Վ.Ասատրյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետի հատկանիշներով հարուցված թիվ 60300915 քրեական գործի նախաքննության ընթացքում վկա Հ.Համբարձումյանի դիմումը քրեական գործով իրեն տուժող ճանաչելու մասին չի քննարկել և օրենքով սահմանված ժամկետում նրան չի պատասխանել՝ անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը:

Հրշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Վ.Ասատրյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ անուշադրության հետևանքով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-

րդ մասի պահանջները՝ երեք օրվա ժամկետում չի քննարկել վկա Հ.Համբարձումյանի դիմումը և օրենքով սահմանված կարգով նրան չի պատասխանել: Ընդունում է իրեն առերևույթ վերագրվող իրավախախտումը:

Ուսումնասիրելով նյութերը կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նախաքննության ընթացքում ավագ քննիչ Վ.Ասատրյանը քրեական գործով իրեն տուժող ճանաչելու մասին վկա Հ.Համբարձումյանի դիմումը՝ օրենքով սահմանված ժամկետում չի քննարկել և նրան չի պատասխանել՝ անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով ավագ քննիչ Վ.Ասատրյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վկայի դիմումն օրենքով սահմանված ժամկետներում չքննարկելու և նրան չպատասխանելու դրվագով ավագ քննիչ Վ.Ասատրյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):
2. Սույն որոշման օրինական անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

19 հոկտեմբերի 2015թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Հարություն Մանուկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանի 02.09.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Հ. Մանուկյանի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով քննված թիվ 13200115 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականաց-նելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Հ.Մանուկյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Ավագ քննիչ Հ.Մանուկյանը խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի պահանջները քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման մասին չի հայտնել տուժող Ռ.Նալբանդյանին:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Հ.Մանուկյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ընդունում է իրավախախտման փաստը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Հ.Մանուկյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումը տուժող Ռ.Նալբանդյանին չուղարկելու դրվագով Հ.Մանուկյանի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 8, դեմ՝ 0):
2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստերի առկայության և կատարված խախտումների մեջ քննչական կոմիտեի ծառայողների մեղավորության մասին

19 հոկտեմբերի 2015թ. քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետ Թեմուր Ջնդոյանի և նույն քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Մարտիրոսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին և կողմերին, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը և քննարկելով հիմնական լսումների ընթացքում ստացված տեղեկությունները.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, ՀԿԳ քննության գլխավոր վարչության պետը ՀՀ քննչական կոմիտեի նախագահին 2015թ. հուլիսի 24-ի գրությամբ հայտնել է, Վոլոդյա Ստեփանյանի կողմից անչափահասին շահագործման ենթարկելու, տասնչորս տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերություն ունենալու և անձին ապօրինի ազատությունից զրկելու դեպքերի առթիվ հարուցված քրեական գործով ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի քննչական վարչության պաշտոնատար անձինք քրեական գործ հարուցելու հիմքերի և առիթների ակնհայտ առկայության պայմաններում տևական ժամանակ առանց իրավաչափ նպատակի քրեական գործ չեն հարուցել, նախապատրաստվող առերևույթ հանցավոր արարքների վերաբերյալ տեղեկությունների պայմաններում դրանք խափանելու և կանխելու, ինչպես նաև՝ կատարված առերևույթ հանցավոր արարքները բացահայտելու ուղղությամբ անհետաձգելի քննչական գործողություններ չեն կատարել, իսկ քրեական գործ հարուցելուց հետո առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակ անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ չեն կատարել, ինչը ստեղծել է նոր հանցագործության կատարման և ապացույցների կորստի իրական հնարավորություն:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հանձնարարությամբ կատարված նախնական ուսումնասիրության եզրակացության, ինչպես նաև կարգապահական հանձնաժողովի անդամի միջնորդության հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետ Թեմուր Ջնդոյանի և նույն քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Մարտիրոսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Հիմնական լսումների ընթացքում Կարգապահական հանձնաժողովը ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետ Թեմուր Ջնդոյանին և նույն քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Մարտիրոսյանին վերագրվող առերևույթ խախտումները քննարկել է ըստ ստորև նշված դրվագների.

1.ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Մարտիրոսյանը քրեական գործ հարուցելու հիմքերի և առիթների ակնհայտ առկայության պայմաններում տևական ժամանակ առանց իրավաչափ նպատակի քրեական գործ չի հարուցել:

Հիմնական լսումների ընթացքում ստացված տվյալների՝ ներքին անվտանգության վարչության կատարած նախնական ուսումնասիրության նյութերի, եզրակացության, ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մարտիրոսյանի, նրա անմիջական ղեկավարի բացատրությունների վերլուծության արդյունքում Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մարտիրոսյանը քրեական գործ հարուցելու հիմքերի և առիթների ակնհայտ առկայության պայմաններում տևական ժամանակ առանց իրավաչափ նպատակի քրեական գործ չի հարուցել:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված ղրվագով ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Մարտիրոյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

2. ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Մարտիրոսյանը քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն օրենքով սահմանված կարգով հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական անձին չի ուղարկել:

Հիմնական լսումների ընթացքում ստացված տվյալների՝ ներքին անվտանգության վարչության կատարած նախնական ուսումնասիրության, դրա արդյունքում ստացված նյութերի, կազմված եզրակացության, ինչպես նաև՝ ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մարտիրոսյանի, նրա անմիջական ղեկավարի բացատրությունների վերլուծության արդյունքում կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մարտիրոսյանը քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն օրենքով սահմանված կարգով հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական անձին չի ուղարկել:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Մարտիրոսյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

3. ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Մարտիրոսյանը անչափահաս տուժողների (զոհերի) պաշտպանության ուղղությամբ անհետաձգելի դատավարական գործողություններ չի կատարել:

Հիմնական լսումների ընթացքում ստացված տվյալների՝ ներքին անվտանգության վարչության կատարած նախնական ուսումնասիրության, դրա արդյունքում ստացված նյութերի, կազմված եզրակացության, ինչպես նաև՝ ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մարտիրոսյանի, նրա անմիջական ղեկավարի բացատրությունների վերլուծության արդյունքում կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մարտիրոսյանը, ստանալով Ոստիկանության Արմավիր բաժնի պետի գրությունը՝ Իշխանուհի Սարգսյանի և նրա սիրեկանի կողմից երեխաներին գիշերօթիկ դպրոցից վերցնելու մասին, դրանք խափանելու և կանխելու, օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ անհետաձգելի դատավարական գործողություններ չի կատարել:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Մարտիրոսյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

4. ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Մարտիրոսյանն առանց իրավաչափ նպատակի տևական ժամկետով դրսևորել է անգործություն, այն է՝ անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ չի կատարել, այդ թվում՝ քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի:

Հիմնական լսումների ընթացքում ստացված տվյալների՝ ներքին անվտանգության վարչության կատարած նախնական ուսումնասիրության, դրա արդյունքում ստացված նյութերի, կազմված եզրակացության, ինչպես նաև՝ ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մարտիրոսյանի, նրա անմիջական ղեկավարի բացատրությունների վերլուծության արդյունքում Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մարտիրոսյանն առանց իրավաչափ նպատակի տևական ժամկետով դրսևորել է անգործություն, այն է՝ անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ չի կատարել, այդ թվում՝ քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի, այն է՝ անչափահաս տուժողներ Վարդան և Աստղիկ Դանիլյաններին չի հարցաքննել, այդ ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկել, ենթադրյալ հանցանքը կատարած անձի կողմից անչափահասի հետ սեռական հարաբերություն ունենալու հանգամանքը պարզելու կամ հերքելու նպատակով դատաբժշկական փորձաքննություն չի նշանակել:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Մարտիրոսյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

5. ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետ Թեմուր Ջնդոյանը չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի՝ ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մարտիրոսյանի կողմից նրա վարույթում գտնվող քրեական գործով քննչական գործողությունների ժամանակին կատարելուն:

Հիմնական լսումների ընթացքում ստացված տվյալների՝ ներքին անվտանգության վարչության կատարած նախնական ուսումնասիրության, դրա արդյունքում ստացված նյութերի, կազմված եզրակացության, ինչպես նաև՝ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետ Թ.Ջնդոյանի, նրա անմիջական ենթակայության տակ գտնվող ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մարտիրոսյանի բացատրությունների վերլուծության արդյունքում կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետ Թեմուր Ջնդոյանը չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի՝ ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մարտիրոսյանի կողմից նրա վարույթում գտնվող քրեական գործով քննչական գործողությունների ժամանակին կատարելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1- ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործ հարուցելու հիմքերի և առիթների ակնհայտ առկայության պայմաններում տևական ժամանակ առանց իրավաչափ նպատակի քրեական գործ չհարուցելու դրվագով ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Մարտիրոսյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (8 կողմ, 0 դեմ):

2. Քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն օրենքով սահմանված կարգով հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական անձին չուղարկելու դրվագով ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Աարտիրոսյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (8 կողմ, 0 դեմ):

3. Անչափահաս տուժողների (զոհերի) պաշտպանության ուղղությամբ անհետաձգելի դատավարական գործողություններ չկատարելու դրվագով ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Աարտիրոսյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (8 կողմ, 0 դեմ):

4. Առանց իրավաչափ նպատակի տևական ժամկետով անգործություն դրսևորելու, այն է՝ անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ չկատարելու, այդ թվում՝ քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չկատարել դրվագով ՀԿԳ ավագ քննիչ Աշոտ Մարտիրոսյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (8 կողմ, 0 դեմ):

5. Իրեն անմիջականորեն ենթակա քննիչի՝ ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մարտիրոսյանի կողմից նրա վարույթում գտնվող քրեական գործով քննչական գործողությունների ժամանակին կատարելուն չհետևելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետ Թեմուր Ջնդոյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (6 կողմ, 2 դեմ):

6. Սույն որոշման օրինական անհապաղ ուղղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

06 նոյեմբերի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի քննչական բաժնի պետ, արդարադատության կապիտան Գ.Մարգարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին,Գ.Մարգարյանին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին հասցեագրված՝ ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի քննչական բաժնի վարույթում քննվող թիվ 31102015 քրեական գործով վկա Ա.Խաչատրյանի փաստաբան Կ.Քալանթարյանի դիմումի առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է հետևյալը.

ՀՀ ՔԿ Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի բաժնի պետ Գ.Մարգարյանը, նույն բաժնի քննիչ Ա.Անտոնյանի վարույթում քննվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հականիշներով հարուցված թիվ 31102015 քրեական գործի նախաքննության ընթացքում վկա Ա.Խաչատրյանի ելքը ՀՀ-ից արգելելու վերաբերյալ հետաքննության մարմնին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածով սահմանված՝ իր լիազորություններից չբխող հանձնարարություն է տվել, որի արդյունքում ոչ իրավաչափ կերպով սահմանափակվել է Ա.Խաչատրյանի՝ ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածով ամրագրված՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը:

Կարգապահական հանձնաժողովի նիստի ընթացքում Գ.Մարգարյանը բացատրություն տվեց այն մասին, որ հետաքննության մարմնին հիշատակված բովանդակությամբ հանձնարարություն տալով նպատակ են հետապնդել ոչ թե ոտնահարել Ա.Խաչատրյանի ազատ տեղաշարժվելու իրավունքը, այլ քրեական գործի շահեից ելնելով՝ ապահովել վերջինիս մասնակցությունը կատարվելիք քննչական գործողություններին, բայց միևնույն ժամանակ ընդունեց, որ ըստ էության դրա հետևանքով անհիմն ոտնահարվել է վկայի՝ ազատ տեղաշարժվելու սահմանադրական իրավունքը:

Հանձնաժողովը որոշեց, որ նկարագրված դրվագներով Գ.Մարգարյանի արարքում առկա են կարգապահական խախտման փաստն ու նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ՔԿ Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի բաժնի պետ Գ.Մարգարյանի կողմից, նույն բաժնի քննիչ Ա.Անտոնյանի վարույթում քննվող թիվ 31102015 քրեական գործով վկա Ա.Խաչատրյանի ելքը ՀՀ-ից արգելելու, դրանով իսկ վերջինիս՝ ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածով ամրագրված ազատ տեղաշարժվելու իրավունքը ոչ իրավաչափ կերպով սահմանափակելու վերաբերյալ հետաքննության մարմնին իր լիազորություններից չբխող հանձնարարություն տալու դրվագով Գ.Մարգարյանի արարքում առկա են խախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

06 նոյեմբերի 2015թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, քննարկելով կարգապահական հանձնաժողովի անդամ Հ.Ղուկասյանի՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Արսեն Գեղամյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությունը, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ա.Նալբանդյանի 19.08.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Գեղամյանի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով քննված թիվ 13145015 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ա.Գեղամյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագների.

1. Ավագ քննիչ Ա.Գեղամյանը 30.04.2015թ. գրությամբ «Սամվել Արթուր» ՍՊԸ-ից պահանջել է ներկայացնել աշխատատեղում հրահանգավորման մատյանի, ՍՊԸ-ի կանոնադրության, աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման վերաբերյալ ներքին իրավական ակտերի և այլ փաստաթղթերի պատճեններ, ինչը նախաքննական մարմնին ներկայացվել է միայն 13.05.2015թ.: Նման պայմաններում քննիչը որոշում չի կայացրել վերոգրյալ փաստաթղթերն առգրավվելու մասին:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Գեղամյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ, «Սամվել Արթուր» ՍՊԸ-ից գրությամբ պահանջելով նշած փաստաթղթերը՝ ղեկավարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետով, համաձայն որի՝ քննիչը լիազորված է պահանջել փաստաթղթեր և նյութեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել դեպքի և դրան առնչվող անձանց մասին:Տվյալ դեպքում առգրավում կատարելու անհրաժեշտություն չի տեսել, քանի որ այդպիսի փաստաթղթերի ոչնչացման կամ վնասման վտանգի, ինչպես նաև այդպիսի փաստաթղթերը ինքնակամ չներկայացնելու վերաբերյալ հիմնավոր կասկածներ քննությամբ չեն եղել:

Կարգապահական հանձնաժողովը նշեց, որ նշված գործով առկա փաստական հանգամանքների պայմաններում քննիչի հայեցողական լիազորությունն է որոշելու փաստական հանգամանքների ձեռքբերման եղանակը, ուստի որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Ա.Գեղամյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

2. Հրահանգավորման մատյանը ներկայացնելու և զննելու մասին դատավարական գործողությունն ավագ քննիչ Ա.Գեղամյանն իրականացրել է որպես ընթերակա հրավիրված Գ.Թորոսյանի և Ա.Սարգսյանի մասնակցությամբ, չճշտելով վերջիններիս ինքնությունը՝ այսինքն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Գեղամյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 81-րդ հոդվածի համաձայն որպես ընթերակա հրավիրված Գ.Թորոսյանին և Ա.Սարգսյանին պարզաբանել է իրենց իրավունքներն ու պարտականությունները, սակայն չի ստուգել վերջիններիս անձնագրային տվյալները և հիմնվել է նրանց բանավոր արված հայտարարություններին:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Ա.Գեղամյանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է՝ քննիչը, քննչական գործողությունների իրականացմանը ներգրավելով սույն օրենսգրքի 81-րդ հոդվածում նշված անձանց, ճշտում է նրանց ինքնությունը, բացատրում իրավունքներն ու պարտականությունները,ինչպես նաև քննչական գործողության իրականացման կարգը, ուստի նշված դրվագով Ա.Գեղամյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

3.Ավագ քննիչ Ա.Գեղամյանը 29.05.2015թ. որոշում է կայացրել թիվ 13145015 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին, որը նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից վերացվել է, ինչից հետո՝ առանց որևէ քննչական կամ դատավարական գործողություն կատարելու, 25.06.2015թ. կրկին որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Գեղամյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ 29.05.2015թ. որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կարճելու և Սամվել Մեսրոպյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ ՀՀ քր.դատ.օր-ի 35-րդ հոդ. 1-ին մասի 2-րդ կետով՝ նրա

արարքում հանցակազմի բացակայության հիմքով: 11.06.2015թ.-ին ստացվել է դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի որոշումը՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերացնելու մասին: 12.06.2015թ. որոշում է կայացրել քրեական գործով վարույթը վերսկսելու և վարույթ ընդունելու մասին և դատախազի որոշումը բողոքարկել է վերադաս դատախազին, սակայն 19.06.2015թ. ստացված գրության համաձայն որոշում չի կայացվել՝ վիճարկվող որոշումը վերադաս դատախազի կողմից վերացնելու կարգ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չլինելու պատճառով: 25.06.2015թ.-ին վերստին որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կարճելու և Սամվել Մեսրոպյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

Կարգապահական հանձնաժողովը նշեց, որ դատախազի որոշումը, որը պարունակում է քննչական գործողություն կամ այլ դատավարական գործողություն կատարելու պահանջ, չի կարող դիտարկվել որպես ցուցում, ուստի որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Ա.Գեղամյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Սամվել Արթուր» ՍՊԸ-ից աշխատատեղում հրահանգավորման մատյանը, ՍՊԸ-ի կանոնադրությունը, աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման վերաբերյալ ներքին իրավական ակտերը և այլ փաստաթղթեր չառգրավվելու դրվագով Ա.Գեղամյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 7, դեմ 0):

2. Որպես ընթերակա հրավիրված Գ.Թորոսյանի և Ա.Սարգսյանի ինքնությունը չճշտելու դրվագով Ա.Գեղամյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 1):

3. Թիվ 13145015 քրեական գործի վարույթը կարճելու որոշումը դատախազի կողմից վերացնելու մասին որոշման մեջ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու պահանջը որպես ցուցում չդիտարկելու և չկատարելու դրվագով Ա.Գեղամյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝7, դեմ 0):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

13 նոյեմբերի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Էդգար Ավդալյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, Է.Ավդալյանին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետ Ջ.Ֆարխոյանին ուղղված՝ Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանի գրության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է հետևյալը.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ ԷդգարԱվդալյանը, վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված թիվ 13138614 քրեական գործի վարույթը 12.08.2015թ. կարճելուց հետո, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասով և 262-րդ հոդվածով սահմանված պահանջների անտեսմամբ, առանց դատավարական գործողություններն ավարտելու՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման պատճենը տուժողի իրավահաջորդին և նրա ներկայացուցչին չուղարկելով, 13.08.2015թ. մեկնել է հերթական արձակուրդ, այսինքն՝ առանց իրավաչափ նպատակի տևական ժամկետով դրսևորվել է անգործություն և անհրաժեշտ դատավարական գործողություն չի կատարել, որի հետևանքով տուժողի իրավահաջորդն ու նրա ներկայացուցիչը զրկվել են քրեական գործի նյութերին, ինչպես նաև վարույթը կարճելու մասին որոշմանը ժամանակին ծանոթանալու, և այն ժամանակին բողոքարկելու հնարավորությունից՝ քանի որ հիշյալ որոշման պատճենը ստացել են շուրջ մեկ ամիս անց, այն էլ՝ իրենց գրավոր պահանջից հետո:

Կարգապահական հանձնաժողովի նիստի ընթացքում ավագ քննիչ Է.Ավդալյանը բացատրություն տվեց այն մասին, որ տուժողի իրավահաջորդի, կամ նրա ներկայացուցչի դատավարական իրավունքները միտումնավոր ոտնահարելու կամ դրանց իրականացմանն արհեստականորեն խոչընդոտելու դիտավորություն չի ունեցել, և կարճման որոշումը կայացնելուց անմիջապես հետո կողմերին չի ուղարկել, նկատի ունենալով, որ վերջիններս հաճախ այցելում էին քննչական բաժին և առձեռն ստանում նրանց հասանելիք փաստաթղթերի պատճենները, և այս դեպքում ևս կարծում էր, որ կարճման որոշման պատճենը կտրամադրի նրանց՝ հերթական անգամ քննչական բաժին այցելելիս:

Հանձնաժողովը որոշեց, որ նկարագրված դրվագով ավագ քննիչ Է.Ավդալյանի արարքումառկա է կարգապահական խախտման փաստն ու նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Էդգար Ավդալյանի կողմից վարույթը կարճելու մասին որոշում կայացնելուց հետո առանց իրավաչափ նպատակի տևական ժամկետով անգործություն դրսևորվելու և անհրաժեշտ դատավարական գործողություն, այն է՝ վերոհիշյալ որոշման պատճենը տուժողի իրավահաջորդին և նրա ներկայացուցչին շուրջ մեկ ամսվա ընթացքում չուղարկելու դրվագով Է.Ավդալյանի արարքում առկա են խախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

13 նոյեմբերի 2015թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Էդգար Դանիելյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Հ.Սեդրակյանի 05.10.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ հիմնավորվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Էդգար Դանիելյանը վարույթում քննված թիվ 11839114 քրեական գործով իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված մի շարք նորմեր:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Է.Դանիելյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1.Նախաքննության ընթացքում չի զննել դեպքի վայրը, մինչդեռ անհրաժեշտ է եղել անհապաղ կատարել դեպքի վայրի զննություն: Միաժամանակ դեպքի վայրը չզննելով չի հայտնաբերել ‹‹Շողակաթ›› հեռուստաընկերության տեսախցիկները, այսինքն՝ չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Է.Դանիելյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ընդունում է իր կողմից թույլ տված իրավախախտման փաստը:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում քննիչը չի զննել դեպքի վայրը, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի, մասնավորապես՝ չեն պահպանվել դեպքի վայրին հարակից ‹‹Շողակաթ›› հեռուստաընկերության տեսախցիկների ձայնագրությունները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչի կողմից հանցագործության դեպքի վայրը չզննելու և հնարավոր ապացույցները կորցնելու դրվագով ավագ քննիչ Է.Դանիելյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

2.Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալը 31.07.2015թ. ցուցում է տվել քննիչին լրացուցիչ հարցաքննել տուժողին և վերջինիս մասնակցությամբ զննել դեպքի վայրը, ինչը քննիչի կողմից չի կատարվել:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Է.Դանիելյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ընդունում է իր կողմից թույլ տված իրավախախտման փաստը:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը չի բողոքարկել և չի կատարել իր անմիջական վերադասի պարտադիր կատարման ենթակա ցուցումի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննչական բաժնի պետի տեղակալի ցուցումի պահանջները չկատարելու դրվագով ավագ քննիչ Է.Դանիելյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը, այսինքն՝ քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

3.Տուժող Ա.Ստեփանյանը հրաժարվել է ենթարկվել դատաբժշկական փորձաքննության, սակայն քննիչը տուժողի մարմնի վրա հնարավոր մարմնական վնասվածքները հայտնաբերելու նպատակով որոշում չի կայացրել քննում կատարելու մասին, այսինքն՝ չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 220-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Է.Դանիելյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ որոշում է կայացրել դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին, սակայն տուժողը հրաժարվել է ներկայանալ, պատճառաբանելով, որ մարմնական վնասվածքներ չի ստացել:Բացի այդ վերջինս տվել է նաև նույնաբովանդակ ցուցմունք:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ փորձաքննություն նշանակված լինելու պայմաններում քննում չկատարելու դրվագով ավագ քննիչ Է.Դանիելյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում դեպքի վայրը չզննելու և հնարավոր ապացույցները չհայտնաբերելու դրվագով ավագ քննիչ Է.Դանիելյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2.Քննչական բաժնի պետի տեղակալի ցուցումի պահանջները չկատարելու դրվագով ավագ քննիչ Է.Դանիելյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

3. Փորձաքննություն նշանակված լինելու պայմաններում տուժողի մարմնի քննում չկատարելու դրվագով Է.Դանիելյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

20 նոյեմբերի 2015թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Սմբատ Սաղաթելյանի, ինչպես նաև ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի անդամ Ա.Գրիգորյանի միջնորդության առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Վ.Տիգրանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Արմավիրի մարզի դատախազության դատախազ Գ.Ալոյանի 17.09.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Վ.Տիգրանյանի, իսկ հետագայում Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Սաղաթելյանի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասով քննված թիվ 65100915 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջիններս իրենց լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը ավագ քննիչ Վ.Տիգրանյանին և Ս.Սաղաթելյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումները քննարկել է դրանք միավորելով մեկ դրվագում .

1.Ավագ քննիչ Վ.Տիգրանյանը քրեական գործն իր վարույթում գտնվելու ժամանակ չի նշանակել տուժող Ա.Զիբուխչյանի <<ANYUTA ANYUTA>> կայքէջին ուղարկված լուսանկարների մշակութաբանական և արվեստաբանական փորձաքննություն, խուզարկություն չի կատարել կասկածյալ Հ.Խաչերյանի տանը՝ լուսանկարում երևացող սպիտակեղենը և համակարգիչը հայտնաբերելու համար: Քրեական գործով անցնող <<ddd ddd>> կայքէջի օգտատերերին հանտնաբերելու համար հանձնարարություն չի տվել ՀՀ ոստիկանության ԿՀԴՊԳՎ-ի համապատասխան բաժնին, չի կատարել Հ.Խաչերյանի մարմնի քննում՝ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտումների վերաբերյալ Վ.Տիգրանյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ մշակութաբանական և արվեստաբանական փորձաքննություն չի նշանակել, քանի որ նշված հանցատեսակն իր համար անծանոթ է եղել և այդ մասով ընդունում է իր թերացումը: Հ.Խաչերյանի տանը խուզարկություն չկատարելու վերաբերյալ Վ.Տիգրանյանը հայտնեց, որ սպիտակեղենը որևէ անհատական հատկանիշ չունի նույնականացման համար և անհրաժեշտություն չի տեսել խուզարկություն կատարելու համար, իսկ համակարգիչը հայտնաբերելու հետ կապված հստակ դիրքորոշում չհայտնեց: Հստակ պատասխաններ չինչեցին նաև հետաքննության մարմնին հանձնարարություն տալու և մարմնի քննում կատարելու վերաբերյալ:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ակնհայտ փաստական և իրավական հիմքերի առկայության պայմաններում քննիչը չի կատարել անհրաժեշտ գործողությունները, որոնք իրենց համակցության մեջ խաթարել են նախաքննության արդյունավետությունը և բնականոն ընթացքը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Վ.Տիգրանյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

2.ՀԿԳ քննիչ Ս.Սաղաթելյանը քրեական գործն իր վարույթում գտնվելու ժամանակ չի նշանակել տուժող Ա. Զիբուխչյանի <<ANYUTA ANYUTA>> կայքէջին ուղարկված լուսանկարների մշակութաբանական և արվեստաբանական փորձաքննություն: Մեղադրյալ Դ.Մելքոնյանից առգրավված բջջային հեռախոսով չի նշանակել դատահամակարգչատեխնիկական փորձաքննություն, խուզարկություն չի կատարել Դ.Մելքոնյանի տանը՝ լուսանկարում երևացող սպիտակեղենը հայտնաբերելու համար, քրեական գործով անցնող <<ddd ddd>> կայքէջի օգտատերերին հանտնաբերելու համար հանձնարարություն չի տվել ՀՀ ոստիկանության ԿՀԴՊԳՎ-ի

համապատասխան բաժնին՝ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտումների վերաբերյալ Ս.Սաղաթելյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ընդունում է իր կողմից թույլ տված իրավախախտումների փաստերը:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ակնհայտ փաստական և իրավական հիմքերի առկայության պայմաններում քննիչը չի կատարել անհրաժեշտ գործողությունները, որոնք իրենց համակցության մեջ խաթարել են նախաքննության արդյունավետությունը և բնականոն ընթացքը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ՀԿԳ քննիչ Ս.Սաղաթելյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Նախաքննության ընթացքում մշակութաբանական և արվեստաբանական փորձաքննություն չնշանակելու, Հ.Խաչերյանի տանը խուզարկություն չկատարելու, <<ddd ddd>> կայքէջի օգտատերերին հանտնաբերելու համար հետաքննության մարմնին հանձնարարություն չտալու, քննում չկատարելու դրվագով Վ.Տիգրանյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 8, դեմ՝ 0):

2.Նախաքննության ընթացքում մշակութաբանական և արվեստաբանական, ինչպես նաև դատահամակարգչատեխնիկական փորձաքննություններ չնշանակելու, Դ.Մելքոնյանի տանը խուզարկություն չկատարելու, <<ddd ddd>> կայքէջի օգտատերերին հայնտնաբերելու համար հետաքննության մարմնին հանձնարարություն չտալու դրվագով Ս.Սաղաթելյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 8, դեմ՝ 0):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստերի առկայության և կատարված խախտումների մեջ քննչական կոմիտեի ծառայողների մեղավորության մասին

20 նոյեմբերի 2015թ. քաղ. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Լ.Յոլչյանի և քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանի կողմից առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով քրեական գործը դատավարական ղեկավարին չհանձնելու, նույն քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Տոնոյանի կողմից նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն օրենքով սահմանված կարգով՝ 24 ժամվա ընթացքում դատախազություն չուղարկելու վերաբերյալ ՀՀ ՔԿ կարգապահական հանձնաժողովի անդամ Հ.Ղուկասյանի կողմի ներկայացրած միջնորդության հիման վրա հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, կողմերին, հետազոտելով ՀՀ ՔԿ ներքին անվտանգության վարչությունում կատարված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը և քննարկելով հիմնական լսումների ընթացքում ստացված տեղեկությունները.

Պ Ա Ր Զ Ե Ց

2015թ. օգոստոսի 18-ին Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Կ.Ադամյանը միջնորդություն է ներկայացրել ՀՀ ՔԿ նախագահին՝ նույն վարչական շրջանի քննչական բաժնում քննվող քրեական գործերով քրեադատավարական նորմերի խախտումներ թույլ տալու համար քննիչ Լևոն Յոլչյանի, բաժնի պետի տեղակալ Կամո Շառոյանի և բաժնի պետ Սամվել Մկրտչյանի նկատմամբ ծառայողական քննություն կատարելու վերաբերյալ:

Այնուհետև, 2015թ. սեպտեմբերի 16-ին նույն վարչական շրջանի դատախազության դատախազ Ա. Մարգարյանը ՀՀ ՔԿ նախագահին միջնորդություն է ներկայացրել վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Արգիշտի Տոնոյանի և քննչական բաժնի պետ Սամվել Մկրտչյանի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու համար՝ քրեական գործով դատավարական խախտումներ թույլ տալու համար:

2015թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ ՔԿ նախագահի թույլտվությամբ նախնական ուսումնասիրության նյութերը միացվել են մեկ վարույթ:

Հիմնական լսումների ընթացքում Կարգապահական հանձնաժողովը Շենգավիթ վարչական շրջանների քննչական բաժնի վերը թվարկված ծառայողներին վերագրվող առերևույթ խախտումները քննարկել է ըստ ստորև նշված դրվագների.

1. ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Յոլչյանի վարույթում քննվող N 11139715 քրեական գործն ուսումնասիրության նպատակով հսկող դատախազը պահանջել է 10.07.2015թ.: 15.07.2015թ. քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանը գրությամբ հայտնել է, որ այն կտրամադրվի անհետաձգելի քննչական գործողություններ կատարելուց հետո: 12.08.2015թ. քրեական գործը ստացվել է վարչական շրջանի դատախազությունում և պարզվել, որ առանց իրավաչափ նպատակի քրեական գործը դատախազություն է ուղարկվել տևական ժամանակ անց,

որի ընթացքում քննիչը կատարել է ընդամենը երեք հարցաքննություն և հանձնարարություն է ուղարկել ոստիկանության բաժին:

Հիմնական լսումների ընթացքում ստացված տվյալների՝ ներքին անվտանգության վարչության կատարած նախնական ուսումնասիրության նյութերի, եզրակացության, քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանի և քննիչ Լ.Յոլչյանի բացատրությունների վերլուծության արդյունքում Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քրեական գործը դատախազություն չի ուղարկվել առանց իրավաչափ նպատակների:

Քննիչ Լ.Յոլչյանի կողմից առանց իրավաչափ նպատակի քրեական գործը տևական ժամանակ դատախազին չուղարկելու դրվագի շուրջ կատարված քվեարկությամբ հանձնաժողովի անդամների ձայները կիսվեցին, որպիսի պայմաններում ընդունված համարվեց Կոմիտեի ծառայողի համար առավել բարենպաստ որոշում:

Քրեական գործն առանց իրավաչափ նպատակի դատախազին չուղարկելու քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանի կողմից իր անմիջական ենթակայության տակ գտնվող քննիչի նկատմամբ ոչ պատշաճ հսկողություն իրականացնելու դրվագով՝ կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Կ.Շառոյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը:

1. Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Տոնոյանը, Ն.Քիլաջյանի հանկարծամահության դեպքի առթիվ նախապատրաստված, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն օրենքով սահմանված կարգով 24 ժամվա ընթացքում չի ուղարկել դատախազություն՝ որոշման օրինականությունը ստուգելու համար:

Հիմնական լսումների ընթացքում ստացված տվյալների՝ ներքին անվտանգության վարչության կատարած նախնական ուսումնասիրության, դրա արդյունքում ստացված նյութերի, կազմված եզրակացության, ինչպես նաև՝ ավագ քննիչ Ա.Տոնոյանի բացատրությունների վերլուծության արդյունքում Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Ա.Տոնոյանը խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի պահանջները՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը 24 ժամվա ընթացքում չի ուղարկել դատախազություն՝ օրինականությունը ստուգելու համար:

Նշված դրվագի շուրջ կատարված քվեարկությամբ հանձնաժողովի անդամների ձայները կիսվեցին՝ որի պայմաններում ընդունված համարվեց Կոմիտեի ծառայողի համար առավել բարենպաստ որոշում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 73-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով քրեական գործը դատախազություն չուղարկելու դրվագով Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Լ.Յոլչյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (4 կողմ, 4 դեմ):

2. Առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով քրեական գործը դատախազություն ուղարկելու քննիչի պարտականության նկատմամբ պատշաճ վերահսկողություն չիրականացնելու դրվագով՝ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (7կողմ, 1 դեմ):

3. Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը 24 ժամվա ընթացքում դատախազին չուղարկելու դրվագով Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Տոնոյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (4 կողմ, 4 դեմ):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

2. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքից քաղվածք

Հոդված 15. Քննչական կոմիտեի կարգապահական և որակավորման հանձնաժողովները

1. Քննչական կոմիտեում գործում են կարգապահական և որակավորման հանձնաժողովներ:
2. Կարգապահական հանձնաժողովը բաղկացած է 8 անդամից: Հանձնաժողովի կազմում են քննչական կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ կոմիտեի նախագահի որոշմամբ, քննչական կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող 3 ծառայող, Հայաստանի Հանրապետության Նախագահի և Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմից և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմից նշանակված երկուական ներկայացուցիչ: Կարգապահական հանձնաժողովի անդամները նշանակվում են 3 տարի ժամկետով և չեն կարող միաժամանակ լինել որակավորման հանձնաժողովի անդամներ: Կարգապահական հանձնաժողովում նոր անդամների նշանակումները սույն հոդվածի սույն մասով սահմանված կարգով կատարվում են կարգապահական հանձնաժողովի գործող անդամների լիազորությունները դադարելու օրվան նախորդող օրը:
3. Կարգապահական հանձնաժողովը ղեկավարում է դրա անդամների ձայների մեծամասնությամբ ընտրված անդամներից մեկը:
4. Կարգապահական հանձնաժողովի անդամներն անկախ են: Նրանց գործառույթներն իրականացնելու առնչությամբ որևէ միջամտություն արգելվում է:

Հոդված 31. Քննչական կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը

1. Կարգապահական խախտման փաստի առթիվ քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել կարգապահական հանձնաժողովի որոշմամբ՝ քննչական կոմիտեի նախագահի, նրա տեղակալի կամ կարգապահական հանձնաժողովի որևէ անդամի միջնորդությամբ:

2. Եթե կարգապահական վարույթը հարուցվել է կարգապահական հանձնաժողովի անդամներից մեկի նկատմամբ, ապա նրա մասնակցությունը հանձնաժողովի աշխատանքներին կասեցվում է մինչև համապատասխան որոշում ընդունելը:

3. Քննչական կոմիտեի ծառայողն իրավունք ունի բացատրություն տալու իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ:

4. Կարգապահական վարույթը հարուցվում է կարգապահական խախտում հայտնաբերելու օրվանից հետո՝ 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այն կատարելու օրվանից 12 ամիս հետո:

5. Կարգապահական վարույթի տևողությունը չի կարող գերազանցել 3 շաբաթը, բացառությամբ քննչական կոմիտեի ծառայողի բացակայության դեպքերի: Այդ դեպքերում կարգապահական վարույթի տևողությունը կարող է երկարաձգվել քննչական կոմիտեի ծառայողի բացակայության ժամանակահատվածով:

6. Եթե մինչև կարգապահական վարույթ հարուցելը կամ կարգապահական վարույթ հարուցելուց հետո պարզվել է, որ առկա է քննչական կոմիտեի տվյալ ծառայողի մասնակցությամբ կամ նրա կատարած ենթադրյալ հանցագործության դեպք, ապա կարգապահական վարույթի հարուցումը հետաձգվում է, իսկ հարուցված կարգապահական վարույթը կասեցվում է մինչև համապատասխան նյութերի նախապատրաստման կամ քրեական գործի քննության ավարտը:

7. Սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում կարգապահական տույժը նշանակվում է կարգապահական վարույթի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:

8. Սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-6-րդ կետերով նախատեսված դեպքերում կարգապահական վարույթի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, քննչական կոմիտեի նախագահը հարցը ներկայացնում է կարգապահական հանձնաժողովի քննարկմանը:

9. Կարգապահական հանձնաժողովը կարգապահական խախտման հարցը քննելիս քվեարկությամբ որոշում է կարգապահական խախտման փաստի առկայությունը, կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության հարցը, իսկ համապատասխան միջնորդության դեպքում՝ նաև տվյալ իրավիճակում «լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժ կիրառելու հնարավորության հարցը:

10. Կարգապահական տույժի մասին քննչական կոմիտեի ծառայողը իրազեկվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

11. Մեկ կարգապահական վարույթի շրջանակներում, անգամ եթե քննչական կոմիտեի նույն ծառայողը կատարել է մի քանի կարգապահական խախտում, քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ:

12. Եթե քննչական կոմիտեի ծառայողը կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է տույժ չունեցող:

13. Քննչական կոմիտեի ծառայողն իրավունք ունի իր նկատմամբ նշանակված կարգապահական տույժի մասին որոշումն օրենքով սահմանված կարգով բողոքարկելու դատարանում:

14. Կարգապահական տույժի ենթարկված քննչական կոմիտեի ծառայողը չի ազատվում նույն արարքի համար օրենքով սահմանված վարչական կամ քրեական պատասխանատվությունից:

3. «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրաման

Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահի
17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

I. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեության կազմակերպման կարգն ու պայմանները:

2. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է մշտական հիմունք-ներով՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), սույն կարգով, ինչպես նաև՝ այլ իրավական ակտերով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

3. Հանձնաժողովը բաղկացած է 8 անդամից, որի կազմում են Կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ Կոմիտեի նախագահի որոշմամբ, Կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող 3 ծառայող, Հայաստանի Հանրապետության Նախագահի և Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմից և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմից նշանակված երկուական ներկայացուցիչ: Հանձնաժողովի անդամները նշանակվում են 3 տարի ժամկետով:

4. Հանձնաժողովի անդամներն անկախ են: Նրանց գործառույթներն իրականացնելու առնչությամբ որևէ միջամտություն արգելվում է:

5. Հանձնաժողովն ունի նախագահ և քարտուղար:

6. Հանձնաժողովը ղեկավարում է Հանձնաժողովի նախագահը: Հանձնաժողովի նախագահն ընտրվում է Հանձնաժողովի անդամների թվից՝ Հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Հանձնաժողովի նախագահի թեկնածու կարող է առաջադրել Հանձնաժողովի անդամը: Հանձնաժողովի նախագահն ընտրվում է բաց քվեարկությամբ: Հանձնաժողովի նախագահի թեկնածուի քվեարկության ձայների հավասարության դեպքում՝ որոշիչ է համարվում Հանձնաժողովի կազմում ընդգրկված Կոմիտեի նախագահի տեղակալի ձայնը:

7. Հանձնաժողովում նոր անդամների նշանակումներն օրենքով սահմանված կարգով կատարվում են Հանձնաժողովի գործող անդամների լիազորությունները դադարելու օրվան նախորդող օրը:

8. Հանձնաժողովի ընտրվող երեք ծառայողները վիճակահանությամբ ընտրվում են Կոմիտեի ծառայողների թվից, բացառությամբ Կոմիտեի նախագահի և նրա տեղակալների:

9. Վիճակահանություն անցկացնելուց մեկ օր առաջ Կոմիտեի դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչության կողմից վիճակահանությանը մասնակցող Կոմիտեի ծառայողների անուն-ազգանունները և պաշտոնները լրացվում են միատեսակ թերթիկների վրա, բոլոր թերթիկները ծալվում են այնպես, որ միմյանցից չտարբերվեն:

10. Վիճակահանության թերթիկները վիճակահանության թափանցիկ արկղի մեջ են տեղավորվում վիճակահանության հանձնաժողովի նախագահի կողմից, հիշյալ հանձնաժողովի անդամների ներկայությամբ՝ հավաստիանալով վիճակահանությանը մասնակցող ծառայողների և վիճակահանության թերթիկների թվաքանակի համապատասխանության մեջ:

11. Վիճակահանության հանձնաժողովի նախագահը վիճակահանության արկղից երեք անգամ հանում է մեկական թերթիկ, որոնք հերթականությամբ բացում է և բարձրաձայն ընթերցում դրանցում գրառված ծառայողների անուն-ազգանունները և պաշտոնները:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) նպաստել կոմիտեի ծառայողին ներկայացվող բարոյական բարձր չափանիշների ձևավորմանը.

2) նպաստել ծառայողական կարգապահության ամրապնդմանը.

3) նպաստել կարգապահական խախտումների կանխարգելմանը և այդպիսիք ծնող պատճառների վերացմանը.

4) ապահովել Կոմիտեի ծառայողի անկախությունը և իրավունքների պաշտպանությունը.

5) կանխել Կոմիտեի ծառայողին անհիմն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

13. Հանձնաժողովը՝

1) քննարկում է կարգապահական վարույթ հարուցելու մասին միջնորդությունները.

2) տալիս է եզրակացություններ.

3) ընդունում է ընթացակարգային և ըստ էության որոշումներ.

4) իրականացնում է Օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով նախատեսված լիազորություններ:

14. Հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում և ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները.

2) հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը.

3) իր իրավասության սահմաններում հանձնարարականներ է տալիս Հանձնաժողովի անդամներին.

4) ստորագրում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, եզրակացությունները, որոշումներն ու Հանձնաժողովի կողմից կազմված այլ փաստաթղթերը.

5) որոշում է նիստերի օրակարգը, հարցերի քննարկման հերթականությունը.

6) Հանձնաժողովի անդամների կողմից կարգապահական վարույթ հարուցելու մասին միջնորդություն ներկայացնելու դեպքում՝ նախնական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով, այն ուղարկում է Կոմիտեի ներքին անվտանգության վարչություն.

7) կարիքն առաջանալու դեպքում՝ պահանջում է առերևույթ իրավախախտման մեջ կասկածվող Կոմիտեի ծառայողի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր.

8) հարցեր է տալիս նախնական ուսումնասիրություն իրականացրած Կոմիտեի ներքին անվտանգության վարչության ծառայողին (այսուհետ՝ Զեկուցող).

9) հանձնարարում է Հանձնաժողովի քարտուղարին միջնորդությունների վերաբերյալ հավաքել նյութեր, Հանձնաժողովի նիստին ներկայացնել դրանք և կազմել որոշումների, եզրակացությունների ու այլ փաստաթղթերի նախագծեր.

10) Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում, իր լիազորությունների իրականացումը հանձնարարում է Հանձնաժողովի անդամներից մեկին.

11) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված լիազորություններ:

15. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին.

2) առաջարկություններ և կարծիքներ է ներկայացնում Հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ.

3) հարցեր է տալիս Զեկուցողին.

4) ստորագրում է Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները, կազմված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը.

5) Հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ միջնորդություններ.

6) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված լիազորություններ:

16. Հանձնաժողովի քարտուղարին Կոմիտեի դեպարտամենտի ծառայողների թվից նշանակում է Կոմիտեի դեպարտամենտի ղեկավարը:

17. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) արձանագրում է Հանձնաժողովի նիստերը.

2) Հանձնաժողովի նիստի օրակարգի, տեղի և ժամանակի մասին նիստից առնվազն երեք օր առաջ գրավոր կամ կապի միջոցներով տեղեկացնում է Հանձնաժողովի անդամներին, Կոմիտեի ներքին անվտանգության վարչությանը, իսկ Կոմիտեի այն ծառայողին, ում նկատմամբ քննվելու է կարգապահական խախտման հարցը՝ Հանձնաժողովի նիստի տեղի և ժամանակի մասին.

3) Հանձնաժողովի անդամներին տրամադրում է Հանձնաժողովի կողմից քննության առնված հարցերի վերաբերյալ համապատասխան նյութեր, նախնական ուսումնասիրության արդյունքում կազմված եզրակացության օրինակներ.

4) Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ միջնորդությունների վերաբերյալ հավաքում է նյութեր, Հանձնաժողովի նիստում ներկայացնում է դրանք և կազմում որոշումների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախագծեր.

5) իրականացնում է Հանձնաժողովի նիստերի նախապատրաստման հետ կապված աշխատանքներ.

6) Կոմիտեի դեպարտամենտի համապատասխան ստորաբաժանմանը պահպանության և հաշվառման է հանձնում Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և մյուս նյութերը.

7) կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարությունները.

8) ստորագրում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

9) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված լիազորություններ:

18. Հանձնաժողովի նախագահի և անդամների լիազորությունները դադարեցվում են.

1) Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պաշտոնավարման ժամկետը լրանալուց հետո.

2) Օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի կամ Կոմիտեի նախագահի կողմից նշանակված, ինչպես նաև վիճակահանությամբ ընտրված Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամ դադարեցմամբ.

3) անձնական դիմումի համաձայն:

19. Հանձնաժողովի լիազորությունների լիարժեք իրականացումն ապահովում է Կոմիտեի դեպարտամենտը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

20. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան ներկա են Հանձնաժողովի առնվազն 5 անդամ: Նիստը վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ՝ Հանձնաժողովի անդամներից մեկը: Հանձնաժողովի անդամը նիստին ներկայանալու անհնարինության դեպքում՝ այդ մասին նախօրոք տեղյակ է պահում Հանձնաժողովի նախագահին:

21. Հանձնաժողովի անդամը չի մասնակցում այն որոշման կայացմանը, որը վերաբերում է նրա մերձավոր ազգական հանդիսացող Կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելուն, իսկ Կոմիտեի ծառայողների թվից վիճակահանությամբ ընտրված Հանձնաժողովի անդամը՝ նաև իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելուն վերաբերող որոշման կայացմանը:

22. Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում Կոմիտեի կենտրոնական մարմնի վարչական շենքում: Հանձնաժողովի նախագահի որոշմամբ կարող են անցկացվել նաև արտագնա նիստեր:

23. Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Հանձնաժողովի որոշմամբ նիստերը կարող են ձայնագրվել և տեսագրվել: Ձայներիզներն ու տեսաերիզները կցվում են արձանագրությանը՝ որպես հավելված: Հանձնաժողովի նիստի արձանագրությունը, որը ներառում է նաև քննարկված բոլոր հարցերի քվեարկությունների անվանական արդյունքները, ստորագրում են Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

24. Նիստի պարզ թղթային արձանագրությունում նշվում են՝

1) նիստի տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

2) նիստը սկսելու և ավարտելու ժամը.

3) նիստին ներկա Հանձաժողովի անդամների և քարտուղարի անունը.

4) տեղեկություններ Հանձնաժողովի կողմից քննվող հարցի վերաբերյալ.

5) տեղեկություններ՝ նիստին մասնակցող անձանց ներկայանալու վերաբերյալ.

7) նիստին մասնակցող անձանց հայտարարությունները, միջնորդությունները և բացատրությունները.

8) Կոմիտեի ծառայողների, այլ անձանց բացատրությունները.

9) տեղեկություններ՝ նյութերի հրապարակման, զննման և հետազոտման վերաբերյալ.

10) ընթացակարգային որոշումների տեսքով ձևակերպվող որոշումների բովանդակությունը:

25. Հանձնաժողովը կայացնում է ընթացակարգային և ըստ էության որոշումներ, տալիս է եզրակացություններ: Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում կարող է կայացնել նաև սույն կարգին և Օրենքին չհակասող այլ որոշումներ:

26. Հանձնաժողովի՝ ըստ էության որոշումները պետք է լինեն պատճառաբանված և համապատասխան տեղեկություններ պարունակեն Օրենքի 29-րդ հոդվածում նշված կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության (բացակայության) վերաբերյալ:

ԲԱԺՆԻՆ 2. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

V. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

27. Ծառայողական քննությունը բաղկացած է հետևյալ փուլերից՝ նախնական ուսումնասիրություն և կարգապահական վարույթ:

28. Կարգապահական վարույթը բաղկացած է կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ միջնորդության քննարկման, հիմնական լսումների և լրացուցիչ լսումների փուլերից:

VI. ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

29. Նախնական ուսումնասիրություն կատարելու առիթներն են Կոմիտեի ծառայողի կողմից առերևույթ իրավախախտում կատարելու մասին տեղեկություններ պարունակող հետևյալ աղբյուրները՝

1) պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց գրավոր հաղորդումները, դիմումները.

2) դատախազի հաղորդումը կամ միջնորդագիրը.

3) լրատվության միջոցի հաղորդումը.

4) Կոմիտեի ծառայողի կողմից վարչական իրավախախտում կատարելու փաստով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համաձայն կազմված արձանագրությունները.

5) Հանձնաժողովի անդամի միջնորդությունը.

6) Կոմիտեում հայտնաբերված իրավախախտման մասին Կոմիտեի ստորաբաժանման ղեկավարի զեկուցագիրը:

30. Նախնական ուսումնասիրության առիթների առկայության դեպքում Կոմիտեի նախագահը, ինչպես նաև՝ Հանձնաժողովի անդամների կողմից կարգապահական վարույթ հարուցելու մասին միջնորդություն ներկայացնելու դեպքում՝ Հանձնաժողովի նախագահը, նախնական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով, Կոմիտեի ծառայողի կողմից առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող նյութերն ուղարկում են Կոմիտեի ներքին անվտանգության վարչություն:

31. Նախնական ուսումնասիրության ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքներն են՝

1) իրավախախտման օբյեկտիվ հատկանիշները (արարքը, հետևանքը, պատճառական կապը, տեղը, ժամանակը, եղանակը).

2) իրավախախտման սուբյեկտիվ հատկանիշները (մեղքի առկայությունը, շարժառիթը, նպատակը).

3) իրավախախտումներ ծնող պատճառները և դրանց նպաստող պայմանները:

32. Նախնական ուսումնասիրություն իրականացնող ծառայողը լիազորված է՝

1) սահմանված ժամկետներում անցկացնել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ նախնական ուսումնասիրություն՝ կատարված գործողություններին տալով համապատասխան փաստաթղթային ձևակերպում.

2) Կոմիտեի նախագահի և անմիջական ղեկավարի պահանջով պարբերաբար ներկայացնել նախնական ուսումնասիրության նյութերը և զեկուցել ընթացքի մասին.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ մարմիններից և կազմակերպություններից սահմանված կարգով պահանջել փաստաթղթեր, նյութեր և տվյալներ, որոնք կարող են տեղեկություններ պարունակել իրավախախտման և դրան առնչվող անձանց մասին.

4) ուսումնասիրել առերևույթ իրավախախտման փաստին առնչվող քրեական, քաղաքացիական, կարգապահական կամ վարչական վարույթի նյութեր և Կոմիտեի տնօրինության տակ գտնվող այլ փաստաթղթեր, անհրաժեշտության դեպքում դրանց կրկնօրինակները կցել նախնական ուսումնասիրության նյութերին.

5) վերցնել բացատրություններ (լրացուցիչ բացատրություններ) առերևույթ իրավախախտման մեջ կասկածվող Կոմիտեի ծառայողից, նախնական ուսումնասիրությանն աջակցող այլ անձանցից.

6) կատարել զննություն.

7) իր իրավասության սահմաններում լուծել կարգապահական խախտում կատարած Կոմիտեի ծառայողի միջնորդությունները.

8) պարզաբանել առերևույթ իրավախախտման մեջ կասկածվող Կոմիտեի ծառայողի, մասնագետի, թարգմանչի, այլ անձի իրավունքներն ու պարտականությունները:

33. Նախնական ուսումնասիրություն իրականացնող ծառայողի անմիջական ղեկավարը լիազորված է՝

1) նախնական ուսումնասիրությունը հանձնարարել ներքին անվտանգության վարչության ծառայողին, տալ պարտադիր կատարման ենթակա ցուցումներ առանձին գործողություններ կատարելու վերաբերյալ.

2) նախնական ուսումնասիրության ընթացքում դրա իրականացումը գրավոր հանձնարարել ստորաբաժանման այլ ծառայողի.

3) մասնակցել նախնական ուսումնասիրության ընթացքում առանձին գործողությունների կատարմանը, անձամբ կատարել նախնական ուսումնասիրություն.

4) գրավոր հաստատել նախնական ուսումնասիրության արդյունքներով կազմված եզրակացությունը, իսկ դրա հետ համաձայն չլինելու դեպքում՝ ներկայացնել անհամաձայնությունը պատճառաբանող զեկուցագիր:

34. Առերևույթ իրավախախտման մեջ կասկածվող Կոմիտեի ծառայողն իրավունք ունի՝

1) նախնական ուսումնասիրությանը մասնակցելու պահից ծանոթանալու իր իրավունքներին և պարտականություններին.

2) իմանալու, թե ինչում է կասկածվում և բացատրություն տալ դրա վերաբերյալ.

3) բացարկ ներկայացնելու, եթե կան հանգամանքներ, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ նախնական ուսումնասիրություն իրականացնող ծառայողն ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված է նախնական ուսումնասիրության ելքով: Բացարկը լուծում է Կոմիտեի նախագահը:

4) Նախնական ուսումնասիրության ցանկացած փուլում միջնորդություններ ներկայացնելու առանձին գործողություններ կատարելու, ինչպես նաև նախնական ուսումնասիրության նյութերին իր դիմումը հիմնավորող փաստական տվյալներ կցելու և դրանց ընթացք տալու վերաբերյալ.

5) ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված գործողությունների ընթացքի, բովանդակության, արդյունքների վերաբերյալ կազմված տեղեկանքներին կամ արձանագրություններին և դրանց կապակցությամբ ներկայացնելու առաջարկություններ, միջնորդություններ ու դիտողություններ.

6) մինչև նախնական ուսումնասիրության ավարտը ծանոթանալու նյութերին (բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տվյալների), ներառյալ՝ նախնական ուսումնասիրության արդյունքներով կազմված եզրակացությանը:

35. Առերևույթ իրավախախտման մեջ կասկածվող Կոմիտեի ծառայողը պարտավոր է.

1) նախնական ուսումնասիրություն իրականացնող ծառայողի պահանջով ներկայանալու նախնական ուսումնասիրության իրականացման վայր, մասնակցելու անհրաժեշտ գործողությունների և ստորագրությամբ հաստատելու դրանց կապակցությամբ կազմված արձանագրությունների (տեղեկանքների) ճշտությունը, իսկ ստորագրելուց հրաժարվելու դեպքում ներկայացնելու գրավոր պատճառաբանություն.

2) նախնական ուսումնասիրություն իրականացնող ծառայողի պահանջով ներկայացնելու իր մոտ եղած՝ նախնական ուսումնասիրությանն անհրաժեշտ առարկաները և փաստաթղթերը:

36. Նախնական ուսումնասիրությունն իրականացվում է հնարավոր սեղմ ժամկետներում, բայց ոչ ավելի, քան դրա նշանակումից սկսած 15 օրվա ընթացքում: Այդ ժամկետը նախնական ուսումնասիրություն իրականացնող ծառայողի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա կարող է երկարաձգվել ևս մինչև 15 օրով, եթե.

1) նախնական ուսումնասիրություն իրականացնող ծառայողից անկախ պատճառներով ձգձգվում են այլ մարմին կատարված հարցումների պատասխանները.

2) նախնական ուսումնասիրության նյութերով էական համարվող հանգամանքները պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել լրացուցիչ փաստական տվյալներ:

37. Նախնական ուսումնասիրությունը կարող է կասեցվել, եթե՝

1) Հայաստանի Հանրապետության դատախազության և նախաքննության մարմինների քննարկմանն է ուղարկվել նախնական ուսումնասիրության նյութեր՝ մինչև համապատասխան որոշում կայացնելը կամ մինչև Կոմիտեի ծառայողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը.

2) նախնական ուսումնասիրություն նշանակելուց հետո պարզվել է, որ փաստի առթիվ նախաքննության մարմինների կողմից հարուցվել է քրեական գործ՝ մինչև համապատասխան որոշում կայացնելը կամ մինչև Կոմիտեի ծառայողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը.

3) նախնական ուսումնասիրության ժամկետն ավարտվելուց հետո հայտնի չէ այն ծառայողը, ով պետք է ենթարկվի կարգապահական տույժի.

4) առերևույթ իրավախախտման մեջ կասկածվող Կոմիտեի ծառայողը ծանր հիվանդ է կամ գտնվում է արձակուրդում (գործուղման մեջ)՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, և առանց նրա մասնակցության հնարավոր չէ լուծել նախնական ուսումնասիրության վերջնական ընթացքը.

5) գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է նախնական ուսումնասիրության կատարմանը:

38. Սույն կարգի 37-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում նախնական ուսումնասիրությունը կասեցվում է այն իրականացնող ծառայողի կամ վերջինիս անմիջական ղեկավարի զեկուցագրի հիման վրա՝ Կոմիտեի նախագահի, իսկ Հանձնաժողովի անդամի միջնորդության հիման վրա իրականացված նախնական ուսումնասիրության դեպքում՝ Հանձնաժողովի որոշմամբ:

39. Սույն կարգի 37-րդ մասով նախատեսված հիմքերը վերանալու դեպքում նախնական ուսումնասիրությունը վերսկսվում է սույն կարգի 38-րդ մասով սահմանված կարգով:

40. Նախնական ուսումնասիրություն իրականացնող ծառայողը պարտավոր է սեղմ ժամկետում գրավոր տեղեկացնել նախնական ուսումնասիրության վերսկսման մասին այն քաղաքացուն, կազմակերպությանը կամ պաշտոնատար անձին, ումից ստացվել է Կոմիտեի ծառայողի կողմից իրավախախտում կատարելու վերաբերյալ դիմումը, հաղորդումը կամ միջնորդությունը:

41. Նախնական ուսումնասիրության ժամկետի մեջ չի հաշվարկվում այն ժամանակը, որի ընթացքում այն կասեցվել է:

42. Նախնական ուսումնասիրությունը վերսկսելուց հետո այն ավարտվում է 15-օրյա ժամկետում:

43. Սույն կարգի 37-րդ մասով նախատեսված հիմքերով նախնական ուսումնասիրությունը կարող է կասեցվել կարգապահական խախտում հայտնաբերելու օրվանից հետո առավելագույնը 12 ամիս ժամկետով:

44. Նախնական ուսումնասիրությունը դադարեցվում է, եթե՝

1) իրավախախտում կատարելու մեջ կասկածվող ծառայողը մահացել է, և կարգապահական պատասխանատվության ենթակա այլ ծառայողներ չկան.

2) իրավախախտում կատարելու մեջ կասկածվող ծառայողի լիազորությունները դադարել են Օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով.

3) իրավախախտում կատարելու մեջ կասկածվող ծառայողի արարքում բացակայում են կարգապահական խախտման հատկանիշները.

4) իրավախախտում կատարելու մեջ կասկածվող ծառայողի մասնակցությունը կարգապահական խախտման կատարմանն ապացուցված չէ և սպառված են նոր փաստական տվյալներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները.

5) նախնական ուսումնասիրություն նշանակելու առիթ հանդիսացող փաստերի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ կամ համաներման ակտ:

6) լրացել է սույն կարգի 43-րդ մասով նախատեսված նախնական ուսումնասիրության կասեցնելու առավելագույն ժամկետը:

45. Նախնական ուսումնասիրությունը դադարեցնելու վերաբերյալ այն իրականացնող ծառայողը կամ վերջինիս անմիջական ղեկավարը կազմում է եզրակացություն, որը համապատասխան որոշում կայացնելու նպատակով ներկայացվում է Կոմիտեի նախագահին, իսկ Հանձնաժողովի անդամի միջնորդության հիման վրա իրականացված նախնական ուսումնասիրության դեպքում՝ Հանձնաժողովի քննարկմանը:

46. Նախնական ուսումնասիրությունն իրականացվում է Կոմիտեի վարչական շենքերում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ վայրերում:

47. Նախնական ուսումնասիրություն իրականացնող ծառայողը վարույթ իրականացնելիս սահմանափակվում է նախնական ուսումնասիրություն նշանակելու առիթ հանդիսացող փաստաթղթերում նշված հանգամանքների ստուգմամբ և պարզաբանմամբ, իսկ ուսումնասիրության ընթացքում նոր հանգամանքներ ի հայտ գալու դեպքում դրանք նույնպես ստուգվում և պարզաբանվում են՝ այդ մասին նախապես զեկուցելով Կոմիտեի նախագահին:

48. Նախնական ուսումնասիրության ընթացքը և արդյունքները վարույթ իրականացնող ծառայողը պետք է գրանցի արձանագրություններում և գրավոր այլ փաստաթղթերում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ դրանց կցված հավելվածներում: Նախնական ուսումնասիրության ընթացքն ու արդյունքները պարունակող փաստաթղթերը պետք է կազմվեն այնպես, որ ապահովվի դրանց բովանդակության հստակ ընկալումը: Նախնական ուսումնասիրության հիմքում չեն կարող դրվել Օրենքի և սույն կարգի պահանջների խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալներ:

49. Նախնական ուսումնասիրության ընթացքում հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում նյութերը համապատասխան զեկուցագրով ներկայացվում են Կոմիտեի նախագահին:

50. Նախնական ուսումնասիրության արդյունքում կազմվում է եզրակացություն՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի առկայության կամ բացակայության վերաբերյալ:

51. Եզրակացությունը բաղկացած է ներածական, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ հետևյալ մասերից.

1) ներածական մասում նշվում են տվյալներ՝ եզրակացությունը կազմելու վայրի, նախնական ուսումնասիրություն սկսելու առիթի, հիմքի և ժամկետի մասին.

2) նկարագրական-պատճառաբանական մասում շարադրվում են տվյալներ՝

- նախնական ուսումնասիրության ընթացքում պարզված հանգամանքների և դրանց հիմնավորումների վերաբերյալ.
- Կոմիտեի ծառայողի մեղավորությունը կամ անմեղությունը հաստատող փաստական տվյալները.
- Կոմիտեի ծառայողին բնութագրող այլ հանգամանքներ.
- Կոմիտեի ծառայողի վերջին մեկ տարում ստացած գործող կարգապահական տույժերի վերաբերյալ տվյալներ.

3) եզրափակիչ մասում շարադրվում են կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի առկայության կամ բացակայության վերաբերյալ հետևությունները, նախնական ուսումնասիրություն իրականացրած անձի անվան, ազգանվան, զբաղեցրած պաշտոնի, դասային աստիճանի, ինչպես նաև եզրակացությունը կազմելու տարվա, ամսվա և ամսաթվի մասին:

52. Կոմիտեի ծառայողի կողմից կարգապահական խախտման առերևույթ հատկանիշների առկայության դեպքում Կոմիտեի նախագահը կամ տեղակալը կարող են Կոմիտեի ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին միջնորդությամբ դիմել Հանձնաժողովին:

53. Հանձնաժողովի անդամի միջնորդության հիման վրա իրականացված նախնական ուսումնասիրության եզրակացությունը և նյութերը ներկայացվում են Հանձնաժողովի նախագահին և միջնորդություն ներկայացրած անդամին: Նախնական ուսումնասիրության եզրակացությունը պարտադիր չէ միջնորդություն ներկայացրած Հանձնաժողովի անդամի համար:

54. Հանձնաժողովի նախագահը կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի առկայության դեպքում կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ դիմում է Հանձնաժողովին:

55. Հանձնաժողովի անդամը նախնական ուսումնասիրության եզրակացության և նյութերի հիման վրա որոշում է կարգապահական վարույթ հարուցելու միջնորդություն ներկայացնելու հարցը:

VII. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

56. Կարգապահական վարույթ հարուցելու միջնորդության առկայության դեպքում Հանձնաժողովի նախագահը բացում է Հանձնաժողովի նիստը՝ հայտարարելով, թե ինչ հարց է ենթակա քննության, ինչպես նաև սահմանում է նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քննության կարգը: Մինչև օրակարգի հրապարակումն այլ հարցեր չեն քննարկվում:

57. Հանձնաժողովի նախագահը հրապարակում է կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությունը և կից ներկայացված նյութերը: Հանձնաժողովի անդամները և առերևույթ իրավախախտման մեջ կասկածվող Կոմիտեի ծառայողն իրավունք ունեն ծանոթանալու կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությանը և կից ներկայացված փաստաթղթերին:

58. Զեկուցողը ներկայացնում է կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրակացությունը և նախնական ուսումնասիրության նյութերը: Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն ծանոթանալու նախնական ուսումնասիրության նյութերին և հարցեր տալ Զեկուցողին:

59. Կարգապահական վարույթ հարուցելու միջնորդության քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշում է կայացնում կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությունը բավարարելու և կարգապահական վարույթ հարուցելու կամ կարգապահական վարույթ հարուցելու մասին միջնորդությունը մերժելու մասին:

60. Հանձնաժողովը որոշումն ընդունում է փակ քվեարկությամբ՝ նիստին ներկա Հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովի անդամն իրավունք չունի ձեռնպահ մնալ քվեարկությունից: Հանձնաժողովի նախագահը քվեարկում է վերջինը: Հանձնաժողովի անդամների ձայները կիսվելու դեպքում ընդունված է համարվում Կոմիտեի ծառայողի համար առավել բարենպաստ որոշումը:

61. Եթե մինչև կարգապահական վարույթ հարուցելը պարզվել է, որ առկա է Կոմիտեի տվյալ ծառայողի մասնակցությամբ կամ նրա կատարած ենթադրյալ հանցագործության դեպք, ապա կարգապահական վարույթի հարուցումը հետաձգվում է մինչև համապատասխան նյութերի նախապատրաստման կամ քրեական գործի քննության ավարտը:

VIII. ՀԻՄՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ

62. Կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու և կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելու դեպքում Հանձնաժողովը քննարկում է հիմնական լսումներ անցկացնելու հարցը:

63. Կոմիտեի ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվելու դեպքում Հանձնաժողովը կարող է միջնորդել Կոմիտեի նախագահին կասեցնելու առերևույթ իրավախախտման մեջ կասկածվող Կոմիտեի ծառայողի լիազորությունները, եթե նրան վերագրվում է այնպիսի խախտում, որը կարող է նրա լիազորությունների դադարեցման հիմք հանդիսանալ՝ մինչև տվյալ հիմքով հարուցված կարգապահական վարույթով վերջնական որոշման ընդունումը:

64. Մինչև իրավախախտման վերաբերյալ փաստական տվյալների հետազոտումը սկսելը բացման խոսքով հանդես է գալիս Զեկուցողը, ով ներկայացրել է կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի առկայության վերաբերյալ եզրակացությունը, կամ Հանձնաժողովի անդամը, ում միջնորդության հիման վրա հարուցվել է կարգապահական վարույթը: Զեկուցողը կամ հանձնաժողովի անդամը բացման խոսքում ներկայացնում է Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի այն կետը, որի առերևույթ խախտման մեջ կասկածվում է Կոմիտեի ծառայողը, ինչպես նաև իրավախախտում կատարելու փաստական հիմքը: Հանձնաժողովի նախագահը և անդամներն իրավասու են Զեկուցողի կամ Հանձնաժողովի՝ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդություն ներկայացրած անդամի դիրքորոշումը ճշտող հարցեր տալ:

65. Առերևույթ իրավախախտման մեջ կասկածվող ծառայողը, նիստին մասնակցելու դեպքում, իրավունք ունի բացման խոսքում ներկայացնել իրեն վերագրվող իրավախախտման վերաբերյալ դիրքորոշումը: Հանձնաժողովի նախագահը և անդամներն իրավասու են ծառայողիդիրքորոշումը ճշտող հարցեր տալ:

66. Բացման խոսքերը ներկայացնելուց անմիջապես հետո Հանձնաժողովն անցնում է նախնական ուսումնասիրության նյութերի կամ Հանձնաժողովի՝ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդություն հարուցած անդամի ներկայացրած նյութերի հետազոտմանը:

67. Զեկուցողը կամ Հանձնաժողովի՝ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդություն հարուցած անդամը Հանձնաժողովին ներկայացնում է յուրաքանչյուր վերաբերելի նյութի հակիրճ բովանդակությունը, ինչպես նաև տվյալ նյութով հիմնավորվող իրավախախտման հատկանիշները: Հանձնաժողովի նախագահը կամ անդամներն իրավասու են յուրաքանչյուր ներկայացված նյութի վերաբերյալ տալ հարցեր:

68. Կոմիտեի ծառայողն իրավունք ունի բացատրություն տալու իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ: Հանձնաժողովի նախագահն իր նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի անդամի միջնորդությամբ բացատրություն տալու նպատակով նիստին կարող է հրավիրել առերևույթ իրավախախտման մեջ կասկածվող Կոմիտեի ծառայողին կամ այլ անձի:

69. Հանձնաժողովը նյութեր չի հետազոտում, եթե առերևույթ իրավախախտման մեջ կասկածվող Կոմիտեի ծառայողը Հանձնաժողովի նիստին ընդունում է իրեն վերագրվող իրավախախտումը կատարելու հանգամանքը, իր մեղավորությունը և գրավոր միջնորդում է առանց նյութեր հետազոտելու անցնել լրացուցիչ լսումների:

70. Հանձնաժողովի նախագահը և անդամներն իրավասու են առերևույթ իրավախախտման մեջ կասկածվող Կոմիտեի ծառայողին առանց նյութեր հետազոտելու լրացուցիչ լսումների անցնելու մասին միջնորդության վերաբերյալ հարցեր տալ:

71. Նյութերը հետազոտելուց կամ առանց նյութեր հետազոտելու լրացուցիչ լսումների անցնելու մասին առերևույթ իրավախախտման մեջ կասկածվող Կոմիտեի ծառայողի միջնորդությունը բավարարելուց հետո Հանձնաժողովի նախագահը հայտարարում է հիմնական լսումների ավարտը, և որոշում կայացնելու համար Հանձնաժողովը հեռանում է առանձին սենյակ:

72. Հանձնաժողովն առանձին սենյակում կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) կարգապահական խախտման փաստի բացակայության մասին.

2) կարգապահական խախտման փաստի առկայության և Կոմիտեի ծառայողի մեղավորության մասին.

3) կատարված իրավախախտման մեջ Կոմիտեի ծառայողի մեղքի բացակայության մասին:

73. Հանձնաժողովը որոշումն ընդունում է առանձին սենյակում՝ փակ քվեարկությամբ՝ նիստին ներկա Հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովի անդամն իրավունք չունի ձեռնպահ մնալ

քվեարկությունից: Հանձնաժողովի նախագահը քվեարկում է վերջում: Հանձնաժողովի անդամների ձայները կիսվելու դեպքում ընդունված է համարվում Կոմիտեի ծառայողի համար առավել բարենպաստ որոշումը:

74. Հանձնաժողովի որոշումները ստորագրում են Հանձնաժողովի նախագահն ու անդամները: Դեմ քվեարկած անդամն իրավունք ունի չստորագրել որոշումը, սակայն պարտավոր է ներկայացնել պատճառաբանված հատուկ կարծիք, որը կցվում է որոշմանը:

75. Սույն կարգի 72-րդ մասով սահմանված որոշումներն անհապաղ ուղարկվում են Կոմիտեի նախագահին:

76. Եթե կարգապահական վարույթ հարուցելուց հետո պարզվել է, որ առկա է Կոմիտեի տվյալ ծառայողի մասնակցությամբ կամ նրա կատարած ենթադրյալ հանցագործության դեպք, ապա կարգապահական վարույթը կասեցվում է մինչև համապատասխան նյութերի նախապատրաստման կամ քրեական գործի քննության ավարտը:

77. Կարգապահական խախտման փաստի առկայության և անձի մեղավորության մասին որոշում կայացնելու դեպքում Հանձնաժողովն անցնում է լրացուցիչ լսումների, եթե Կոմիտեի նախագահը Զեկուցողի միջոցով ներկայացնում է Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-6-րդ կետերով նախատեսված տույժերի կիրառման հարցը:

IX. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԼՍՈՒՄՆԵՐ

78. Լրացուցիչ լսումների ընթացքում Հանձնաժողովը քննարկման առարկա է դարձնում Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-6-րդ կետերով նախատեսված տույժերի կիրառման հարցը:

79. Զեկուցողը լրացուցիչ լսումների ընթացքում ներկայացնում է Կոմիտեի նախագահի դիրքորոշումը՝ 4-6 կետերով նախատեսված կոնկրետ տույժի կիրառման մասին:

80. Կոմիտեի նախագահի կողմից «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» տույժի կիրառման հարցը քննարկման ներկայացնելու դեպքում, Հանձնաժողովը եզրակացություն է տալիս կամ «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով», կամ «կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով» տույժի կիրառման նպատակահարմարության մասին: Եթե Հանձնաժողովը եզրակացություն է տալիս «կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով» տույժի կիրառման նպատակահարմարության մասին, ապա Կոմիտեի նախագահը կիրառում է «կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով» տույժը:

81. Կոմիտեի նախագահի կողմից «կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով» տույժի կիրառման հարցը քննարկման ներկայացնելու դեպքում, Հանձնաժողովը եզրակացություն է տալիս կամ «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով», կամ «կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով» տույժի կիրառման նպատակահարմարության մասին: Եթե Հանձնաժողովը եզրակացություն է տալիս «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» տույժի կիրառման նպատակահարմարության մասին, ապա Կոմիտեի նախագահ կարող է կիրառել «կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով» տույժը:

82. Կոմիտեի նախագահի կողմից «լիազորությունների դադարեցում» տույժի կիրառելու հնարավորության վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու դեպքում, եթե Հանձնաժողովը որոշում է կայացնում «լիազորությունների դադարեցում» տույժի կիրառման անհնարինության մասին, ապա Կոմիտեի նախագահին առաջարկում է նրա հայեցողությամբ կիրառել «կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով» կամ «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» տույժերից մեկը:

X. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

83. Կոմիտեի ծառայողն իրավունք ունի իր նկատմամբ նշանակված կարգապահական տույժի մասին որոշումն Օրենքով սահմանված կարգով բողոքարկելու դատարանում:

4. ««Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով «օրենքի կոպիտ խախտում» հասկացության գնահատման ուղենիշների վերաբերյալ» ՀՀ ՔԿ կարգապահական հանձնաժողովի արձանագրային որոշում

Հավելված
ՀՀ քննչական կոմիտեի
կարգապահական հանձնաժողովի
27.03. 2015թ.
արձանագրային որոշման

ՈՒՂԵՑՈՒՅՑ

«Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով «օրենքի կոպիտ խախտում» հասկացության գնահատման ուղենիշների վերաբերյալ

1.Սույն ուղեցույցով սահմանվում են «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով «օրենքի կոպիտ խախտում» հասկացությունը Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի կողմից գնահատելու ուղենիշները:

2.Ուղեցույցում արտացոլված օրենքի կոպիտ խախտումները սպառիչ չեն և ենթակա են լրացման: Ուղեցույցում արտացոլված օրենքի կոպիտ խախտումները գնահատվում են յուրաքանչյուր կարգապահական վարույթի շրջանակներում հետազոտված փաստական հանգամանքների առանձնահատկությունները հաշվի առնելով:

3.Քննիչի կողմից իր դատավարական լիազորություններն իրականացնելիս՝ «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով՝օրենքի կոպիտ խախտումներն են՝ **մարդու իրավունքների և դատավարական երաշխիքների հետևյալ խախտումները.**

4.մարդու սահմանադրական իրավունքի կամ ազատության խախտումը կամ դրա ոչ իրավաչափ սահմանափակումը.

5. ՀՀ քրեական դատավարության սկզբունքների և դրանց հետ համակարգային կապերի մեջ գտնվող դատավարական նորմերի խախտումը կամ մարդու իրավունքներին առնչվող դատավարական այլ նորմերի խախտումը.
6. *քրեական հետապնդումը դադարեցնելու պարտադիր (ոչ հայեցողական) հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում քրեական հետապնդումը չդադարեցնելը և (կամ) քրեադատավարական հարկադրանքի միջոցները չվերացնելը.*
7. *անձին* օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության դեպքում անձին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չտալը.
8. *դատախազի կողմից հսկողության նպատակով պահանջվող քրեական գործը չհանձնելը, տեղեկատվություն չտրամադրելը, հանձնման ենթակա փաստաթղթերը չհանձնելը կամ առանց իրավաչափ նպատակի՝ քրեական գործի հանձնումը, կամ տեղեկատվության տրամադրումը, կամ հանձնման ենթակա փաստաթղթերի հանձնումը ձգձգելը.*
9. *մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը վերացնելու վերաբերյալ դատախազի ցուցումը չկատարելը.*
10. *իրավական և փաստական հիմքերի բացակայության պայմաններում դատավարական հարկադրանքի միջոց կիրառելը կամ իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ դատավարական* հարկադրանքի միջոց չկիրառելը*:*

5. Քննիչի կողմից իր դատավարական լիազորություններն իրականացնելիս՝ «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով՝ օրենքիկոպիտ խախտումներնեն՝ **մինչդատական վարույթի արդյունավետությունը և բնականոն ընթացքը խաթարող հետևյալ խախտումները.**

1) առանց իրավաչափ նպատակիտևական ժամկետով անգործություն դրսևորելը, այն է՝ անհրաժեշտդատավարական գործողություններ չկատարելը՝ անկախ դրա հետևանքից.
2) քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չկատարելը կամ ժամանակին չկատարելը, որը հանգեցրել կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի.
3) մինչև նախաքննությունն ավարտելը քրեական գործում առկա նյութերը օրենքով սահմանված դատավարական կարգի պահպանմամբ չհետազոտելը կամ փաստացի հետազոտման արդյունքները չարձանագրելը.
4) նախաքննությունն ավարտելու (մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին (մեղադրական ակտ) կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում) կամ քրեական հետապնդումը դադարեցնելու (չիրականացնելու) վերաբերյալ դատավարական փաստաթղթերի ձևին և բովանդակությանը ներկայացվող օրենքի պահանջների խախտումը, որը հանգեցրել կամ կարող էր հանգեցնել մարդու իրավունքների խախտման.
5) դատախազի կամ քննչական բաժնի պետի ցուցումները չկատարելը, որը հանգեցրել է կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի.
6) ապացույցներ հավաքելիս՝ օրենքի այնպիսի խախտում կատարելը, որը հանգեցրել կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցի անթույլատրելիության.
7) օրենքով նախատեսված դատավարական ժամկետները խախտելը: